AZG NEW PDF.qxd 10/06/2010 23:00 Page 1


# Ազգ
Azg

11 ՅՈՒՆԻՍ 2010 ՈՒՐԲԱԹ 107 (4487)

ISSN: 1829-1651


## ՀՀ ԱԳՆ. «Մենք ուշադիր հետեւում ենք իրանյան զարգացումներին»

Հայաստանը ուշադրությամբ հետեւում է Իրանի միջուկային ծրագրի շուրջը տեղի ունեցող զարգացումներին եւ գտնում է, որ բոլոր վիճելի հարցերը պետք է լուծվեն խաղաղ բանակցությունների միջոցով: Այդ մասին հայտարարել է Հայաստանի ԱԳՆ լրատվամիջոցների հետ կապերի բաժնի վարիչ **Տիգրան Բալայանը**՝ մեկնաբանելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից հունիսի 9-ի Իրանի հանդեպ պատժամիջոցների նոր փաթեթի ընդունումը: «Հուսով ենք, որ Իրանի եւ միջազգային հանրության հետագա ջանքերի շնորհիվ հնարավոր կլինի գալ համաձայնեցված լուծումների», նշել է Բալայանը:

Իսկ Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը բանաձեւն արդեն որակել է «թաշկինակ, որով կարելի է սրբել քիթն ու նետել աղբարկղը»:

Հ. Ա.

## Ֆուտբոլային կրքեր եւ կրքոտ ֆուտբոլ



**Կրքերը բորբոքված են արդեն եւ կպոռթկան այս գիշեր, համաշխարհային կրքով, այս անգամ՝ աֆրիկյան տեսակի: 32 երկրներ այսօրվանից կխելագարվեն կլոր գնդակի վազքից, խելագարեցնելով մնացյալներին, նաեւ՝ մեզ: Օրվա եւ օրերի գլխավոր թեման կդառնա, բարեբախտաբար, ֆուտբոլը, որն իր հմայքի տակ կպահի ողջ աշխարհը, նույնիսկ ֆուտբոլից ոչինչ չհասկացող հյուսիսաֆրիկացիներին: Երկրորդական պլան կմղվեն մյուս բոլոր խնդիրները, հակամարտությունները, խժդժությունները անգամ, մարդկությունը կմտնի իր մանկական անհոգ ոգեւորության փուլ, դժբախտաբար՝ կարճատեւ:**

**Ֆուտբոլային այդ ոգեւորությունն այս անգամ կլինի ավելի խելացնոր՝ առաջին անգամ խաղերը տեղի են ունենում Աֆրիկյան ցամաքամասում, հենց այն երկրում, որտեղ 24 տարի առաջ Նելսոն Մանդելայի ու Դեզմոնդ Տուտու արքեպիսկոպոսի առաջնորդությամբ վերջ տրվեց ապարթեիդին՝ երկրի 75 տոկոսը կազմող սեւամորթների ազատագրմամբ: Դրանով իսկ Հարավային Աֆրիկան դարձավ աֆրիկյան ողջ ցամաքամասի առաջատարը, քառորդ դար հետո դառնալու համար նրա հպարտությունը նաեւ, ֆուտբոլայի՛ն հպարտությունը:**

**Ֆուտբոլային կրքերը համակել են նաեւ մեզ, հայաստանցիներիս: Գոնե մեկ ամիս, թվում է, ազատվելու ենք մեր տեւական հոգսերից, ամենօրյա դժվարություններից: Թվում է:**

**Ուրեմն՝ կեցցե՛ ֆուտբոլը:**

## Հայաստանում գտնվել է աշխարհի ամենահին կաշվե կոշիկը

Գերմանական բազմաթիվ լրատվամիջոցներ հունիսի 10-ին իրազեկում են, թե գիտնականները աշխարհի ամենահին կաշվե կոշիկն են գտել Հայաստանում: 37 համարի կոշիկը 5500 տարեկան է, մի քանի հարյուրամյակ ավելի հին, քան մինչ այդ հայտնաբերված «Ötzi» սառած մումիայի ոտնամանը: «Շատ ոգեւորված եմ, որ նույնիսկ կոշիկի քուղն է պահպանվել», ասել է հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի դոկտորանտ **Դիանա Սարդարյանը**, որը նաեւ միջազգային հետազոտական մի թիմի անդամ է, որ ներկայացնում է գտածոն PLoS One մասնագիտական հանդեսում:

Աջ ոտքի 24,5 սմ երկարությամբ եւ մինչեւ 10 սմ լայնությամբ կոշիկը հայտնի չէ՝ պատկանել է տղամարդո՞ւ, թե՞ կնոջ: Տղամարդիկ այն ժամանակ ավելի կարճահասակ են եղել, քան այժմ: Գտածոն լավ է պահպանվել չոր եւ սառը պայմաններում, ԱՄՆ-ում եւ Մեծ Բրիտանիայում կատարված հետազոտությունները հաստատել են, որ կոշիկը Ք.ա. 3500 տարի առաջ է ստեղծվել եւ 1000 տարով ավելի մեծ է, քան Եգիպտոսի Գիզեի բուրգը: Կոշիկը խոզի կամ ցուլի մի կտոր կաշվից է: Գտածոյի կողքին գտնվել են նաեւ մի կուժ եւ այծի պոզեր: Աշխարհի ամենահին ոտնամանը, ենթադրում էին, թե եղել է մոտ 7500 տարի առաջ բուսական ծագմամբ բոկոտիկը (սանդալ), որ տասնամյակներ առաջ գտնվել է ամերիկյան Միսսուրի նահանգում:

Հայկական գտածոն 2008-ի արդյունք է, բայց գիտնականները միայն հիմա են հայտնաբերել դրա տարիքը, քանի որ նմանատիպ կոշիկներ մինչ 1950-ականները կրել են արեւմտաիռլանդական Արան կղզիներում: «Այս ոճի եւ ձեւի կոշիկներ հազարամյակներ շարունակ կրել են տարբեր շրջաններում ապրող մարդիկ», ասել է գիտնականներից **Պինհասին**: Նրա ասելով, դեռ պարզ չէ, թե Նախիջեւանին հարակից Վայոց ձորի մարզում հազարամյակների հետքեր պահպանած քարանձավը առանձնահատուկ նշանակություն է ունեցել: Նույն քարանձավում պահպանվել են նաեւ մանուկների գերեզմաններ: Բայց այնքան քիչ բան է հայտնի այդ ժամանակահատվածի մասին, որ վստահորեն դժվարանում ենք մեկնաբանել, թե ինչու են թվարկած բոլոր առարկաները հենց այստեղ հայտնաբերվել, ասել է Պինհասին: Հստակ է, որ Արենի-1 անունը կրող քարանձավի բազմաթիվ սենյակներում լուրջ հետազոտություններ պիտի կատարվեն:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

## Օտարալեզու դպրոցների նախագիծը խորհրդարանում միանշանակ չի ընդունվում

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**Երեկ ավարտվեց Ազգային ժողովի վերջին քառօրյան եւ կիսատ մնաց «Լեզվի մասին» եւ «Հանրակրթության մասին» օրենքների փոփոխությունների այն փաթեթի քննարկումը, որոնցով Հայաստանում միջպետական պայմանագրերի հիման վրա եւ մասնավոր հիմունքներով նախատեսվում է բացել 15 օտարալեզու դպրոց կամ ինչպես նախագծում է ձեւակերպված՝ «այլընտրանքային, հեղինակային, փորձարարական եւ միջազգային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ, որոնք հանրակրթությունը կազմակերպում են օտար լեզվով»: Դեռ ելույթների մի մասը եւ խմբակցությունների տեսակետները մնացին չարտաբերված, հավանաբար հարցը կշարունակեն քննարկել արտահերթ նիստով: Ասենք, որ քվեարկություններից առաջ «Ժառանգությունը» երկու անգամ, իսկ ՀՅԴ-ն 1 անգամ 20 րոպեանոց ընդմիջումներ վերցրեցին: Չնայած հարցի ծանրությանը եւ մինչեւ խորհրդարանական քննարկումների սկիզբը եղած հասարակական բացասական ռեզոնանսին՝ մինչեւ մեծ ընդմիջում տեղի ունեցողը հումորի երանգներ էլ ուներ իր մեջ: Լարիսա Ալավերդյանի նոր փորձը՝ եւս մեկ անգամ 20 րոպեանոց ընդմիջում վերցնելու, այս անգամ չնկատեց Ազգային ժողովի նախագահը, մինչ այդ էլ նա դիտողություն էր արել, թե ինչ է, փորձում եք խաբարե՞լ ԱԺ բնականոն աշխատանքը: ՀՅԴ խմբակցության ղեկավար Վահան Հովհաննիսյանը պատասխանեց, թե որեւէ կուսակցություն չի կարող շիզոֆրենիայի հասնել ու խանգարել ԱԺ աշխատանքը՝ եթե այդ մտադրությունը լիներ, ինքը կկանգներ ամբիոնին ու չէր իջնի, մինչեւ ոստիկանները չիջեցնեին: Այդպես էլ հարցի քննարկումը, որ դեռ նախորդ օրն էր սկսվել, շարունակվեց:**

**Փաթեթի մասին իրենց կարծիքն արտահայտելու համար աննախադեպ մեծ թվով պատգամավորներ էին գրանցվել՝ 21 հոգի:** *Տես էջ 2*




## Չավուշօղլուն գալիս է Վրաստան

**Հունիսի 13-15-ը պաշտոնական այցով Վրաստանում կլինի Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Մովլութ Չավուշօղլուն: Պաշտոնական տեղեկատվության համաձայն, Չավուշօղլուն կհանդիպի Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլու, խորհրդարանի ղեկավար Դավիթ Բակրաձեի, փոխվարչապետ Թեմուր Յակոբաշվիլու, արտգործնախարար Գրիգոլ Վաշաձեի եւ փախստականների ու բնակեցված հարցերով պետնախարար Կոբա Սուբելիանիի հետ:**

**Քննարկումներ են նախատեսված նաեւ Սահմանադրական դատարանի նախագահ Գեորգի Պապուաշվիլու, խորհրդարանական եւ արտախորհրդարանական ընդդիմության ներկայացուցիչների, Աջարիայի կառավարության ղեկավար Լեւան Վարշալոմիձեի հետ:**

Ա. Հ.

## Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

**Այս համարի երեք հրապարակում նվիրված է գեղանկարչությանը:**

**Լոնդոնի «Թեյթ Մոդեռն» պատկերասրահում ապրիլին բացված «Ամերիկյան աբստրակտ էքսպրեսիոնիզմին» նվիրված ցուցահանդեսի՝ արտերկրի մամուլում առաջացրած աղմուկի արձագանքը Երվանդ Ազատյանի «Արշիլ Գորկու երկրորդ գալուստը» հոդվածում:**

**XX դարի կեսերի հայ գունանկարիչներից ամենաանմիջականը՝ Սեյրան Խաթլամաջյանն ու իր ժամանակը արվեստաբան Մարտին Միքայելյանի հայացքով:**

**Վարոս Շահմուրադյանի ծննդյան 70-ամյակին՝ Աստղիկ Ստամբոլցյան. «Ընդհատված կյանք շարունակվող թռիչքների մեջ»:**

**«Գրական նամականու» էջերում՝ XIX-XX դարասկզբի արեւմտահայ ամենաինքնատիպ, բայց սակավ հայտնի բանաստեղծ-փիլիսոփա Ինտրայի (Տիգրան Չրաքյան) անտիպ նամակների շարքից՝ Պետրոս Դեմիրճյանի ներկայացմամբ:**

**Բորոդինի անվան քառյակի երեւանյան 3-րդ՝ այս տարվա մայիսյան հյուրախաղերի անդրադարձը Սվետլանա Սարգսյանի հոդվածում:**

**Արթուր Նավասարդյանի 30 տարվա վաղեմությամբ հարցազրույցը Մուշեղ Իշխանի հետ՝ գրողի մահվան 20-րդ տարելիցի առիթով:**

**Լուսինե Սահակյանի անդրադարձը ռոդոսցի մեր տաղանդավոր հայրենակցին՝ Բարսեղ Կանաչյանին՝ նվիրված երգահանի ծննդյան 125-ամյակին:**

**Հայաստանյան եւ սփյուռքյան նոր հրատարակությունների՝ Գեւորգ Յազըճյանի ամփոփման շարունակությունը:**

Ս. Բ.

## Խոսրովի անտառը վերածել բետոնե կույտի

«Ռեստորան կառուցելու համար Խոսրովի անտառում կրկին ծառեր են հատում» երեկվա **«Ազգ»**-ի հրապարակմանն արձագանքել է բնապահպանության նախարարությունը: Մամլո ծառայության ուղարկած հաղորդագրության համաձայն «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տեսուչները մեկնել են «Գիլան» արգելավայր եւ «Տեղում պարզել, որ ծառահատում չի եղել: Տվյալ տարածքը վարձակալող «Հովազաձոր» ՍՊԸ-ի աշխատակիցները համապատասխան մասնագետների հետ համատեղ իրականացրել են սանիտարական էտում, կտրելով խնձորենիների չորացած ճյուղերը: Բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության աշխատակիցները եւ «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի տեսուչները մշտապես իրականացնում են վերհսկողական աշխատանքներ եւ որեւէ խախտում չի անտեսվում նրանց կողմից»:

Մի քանի օր առաջ ծառեր հատվել են, թե չեն հատվել, դա արդեն էական չէ: Երեւի պետք է փողոցում տեսախցիկներով քայլենք, որպեսզի ամեն հատած ծառը նկարենք եւ ուղարկենք նախարարությանը: Խնդիրն այն է, որ որոշակի դադարից հետո այնտեղ լայն թափով շինարարություն է ընթանում:

Հաղորդագրության մեջ նշվում է նաեւ, որ կառավարության որոշմամբ «Գիլան» պետական արգելավայրի համապատասխան հողամասերը կարող են կառուցապատման իրավունքով տրամադրվել մինչեւ 60 տարի ժամկետով, գյուղատնտեսական գործունեության համար հողամասերը կարող են վարձակալության իրավունքով տրամադրվել մինչեւ 10 տարի ժամկետով, խոտհնձի համար՝ 5 տարի ժամկետով: Հետաքրքրական է՝ «վարձակալության իրավունքով տրամադրվել» արտահայտության տակ հասկանում են ծառահատումնե՞ր: Եթե երկհարկանի շինություն են կառուցում, տրամաբանական է, որ դրա կառուցման համար ծառեր են հատվել: Նախարարությունը պետք է այս խնդրով մտահոգվի, փաստով, որ անտառում լիճ կառուցելու համար հիմքեր են գցում: Ցավոք, նախարարությունն այս ամենի վերաբերյալ լռում է:

Հաշվի առնելով ներկայիս Ծաղկաձորի եւ Երեւանի օրինակը՝ նախարարությունը պետք է գիտակցի, որ մի քանի տարի անց Խոսրովի անտառը կվերածվի բետոնե անտառի: Հ. Հ.

# Ռազմական միջամտությունը տարածքային վեճերում միայն առավել խորացնում է դրանք

Այս կարծիքը երեկ՝ ԳԱԱ արեւելագիտության ինստիտուտում հայտնեց շվեյցարահայ վերլուծաբան **Վիգեն Չթերյանը**՝ ներկայացնելով իր հեղինակած զեկույցը՝ «Պատերազմ եւ խաղաղություն՝ Կովկասում» վերնագրով: Չթերյանն անդրադարձել է հետխորհրդային Կովկասի բոլոր «տարածքային վեճերին», որոնք, վերլուծաբանի խոսքերով, ավելի քան 90 էին. «Սակայն դրանցից մի քանիսն ընդամենը պատերազմներով ընթացան, իսկ երբ այս վեճերը պատերազմական ընթացք են ստանում, ապա առավել խորանում են», նշեց Չթերյանը: Ըստ վերլուծաբանի, եթե Սովետական Միությունը ավելի դանդաղ տեմպերով փլուզվեր, ապա հնարավոր է, որ այսքան պատերազմներ չբռնկվեին. «Բայց այդպես չեղավ: ԽՍՀՄ փլուզումից հետո հետխորհրդային տարածքում առաջացավ վակուում, եւ, իմ կարծիքով, բոլոր այս հակամարտությունների պատճառը հենց դա է», նշեց Չթերյանը: Նա շեշտեց, որ սխալ է այն պատկերացումը, թե մեկ պետության մի փոքր մաս փորձում է անջատվել դրանից. «Նկատենք, որ այդ «փոքր տարածքները» չէ, որ սկսել են պատերազմը, այլ հակառակը՝ Վրաստանը պատերազմ սկսեց Աբխազիայի դեմ, Ադրբեջանը՝ Ղարաբաղի», ասաց վերլուծաբանը: Իսկ թե ինչո՞ւ, ի տարբերություն նախկին ԽՍՀՄ տարածքի այլ հակամարտությունների, ղարաբաղյանը, աբխազականը, կամ չեչենականը ստացան պատերազմական ընթացք, Չթերյանը հիմնավորում է հետեւյալ կերպ. «Առաջինն այն է, որ այս ժողովուրդները ունեն պատմական ծանր հիշողություններ, հայերի մեջ Ցեղասպանությունն է, չեչենների՝ 1944-ի բռնագաղթը, որը նրանց համար նույնն է, ինչ մեզ համար Ցեղասպանությունը: Իսկ նման անցյալ ունեցող ազգերը, երբ անցնում են նոր ժամանակաշրջան (նկատի ունի ԽՍՀՄ փլուզումը-Հ. Ա.), առավել սրությամբ են դնում իրենց ինքնորոշման հարցը: Բացի սրանից՝ այս երեք ժողովուրդներից ոչ ոք ինքը չի նախաձեռնել պատերազմը: Ինչպես արդեն նշեցի՝ Աբխազիայի պարագայում պատերազմ սկսողը Վրաստանն էր, Ղարաբաղում՝ Ադրբեջանը, Չեչնիայում՝ Ռուսաստանը», ասաց Չթերյանը՝ հավելելով, որ եթե Ռուսաստանին ի վերջո հաջողվեց պատերազմով «լռեցնել» Չեչնիային, չնայած դրա համար վճարելով ծանր գին, քանի որ այսօր Հյուսիսային Կովկասում կան մի շարք ծայրահեղ իսլամական խմբավորումներ, ապա Աբխազիան ու Ղարաբաղը հաղթանակած դուրս եկան պատերազմից: «Բայց պետք է հաշվի առնել, որ Ղարաբաղի հարցը դեռ լուծված չէ: Եթե հայերի համար արդեն լուծված է, ապա Բաքվում ամենեւին էլ այդպես չեն կարծում: Հետեւաբար պետք է նկատել, թե ինչ զարգացումներ կան հարեւան երկրում», նշեց վերլուծաբանը:

Հ. Ա.

# Լեզվի մասին օրինագիծը կպառակտի ազգը

Կառավարության նիստերի դահլիճի մուտքի մոտ, ուր ընթանում էր ԱԺ քառօրյան, երեկ կրկին մարդաշատ էր: Ի տարբերություն նախորդ երեք օրերի, այս անգամ «Մենք դեմ ենք օտարալեզու դպրոցների բացմանը» նախաձեռնության ակտիվիստները եռապատկվել էին: Երբ դահլիճ էին մտնում օրինագծին կողմ՝ իշխանական մեծամասնություն ներկայացնող պատգամավորները՝ ցուցարարները բղավում էին՝ «ամո՛թ, ամո՛թ»: Այս անգամ էլ տգեղ պահվածքով աչքի ընկան մի շարք պատգամավորներ, որոնք հայհոյում ու վիրավորում էին ցուցարարներին:

«Ուզում են սպանել հայոց պատմությունը, հայ մշակույթը, որ վաղը չէ մյուս օրը ունենանք մի էլիտա, որ չգիտե տարրական լեզու, որ ճնշում է մյուս ժողովուրդներին: Ունենանք մի սերունդ, որ արժանապատվություն չունի: Մտածեք՝ ի՞նչ եք անում, ժողովուրդը վաղը ձեզ չի ներելու», ասաց քաղաքագետ **Վահրամ Սողոմոնյանը**:

Ցուցարարներին միացած ԱԻՄ առաջնորդ **Պարույր Հայրիկյանն** ընդունում է հանրության մտահոգությունները: «Հայաստանում կան թեքումով դպրոցներ, եւ ես դրանց դեմ չեմ: Սա պրիմիտիվ ինքնադրսեւորում է, եւ անկասկած արվում է փողի համար, գիտեմ մի բան՝ եթե Հայաստանը պետք է լինի՝ էս տեսակ մանրմունր դավադրությունները տեղ չունեն, իսկ Հայաստանը պետք է լինի», ասաց նա:

Հայագետ **Հայկազուն Ալվրցյանը** «Լեզվի մասին» օրենքի փոփոխությունն անվանեց հայոց դպրոցի, հայ ժողովրդի մահ: «Տեսան, որ դեբիլներով, անուղեղ վերնախավով չեն կարողանում ազգին վերջնականապես ոչնչացնել, ծրագիրը փոխել են եւ ուզում են խելոք երեխաներին այլասերելով ազգի հարցերը լուծել: Չի ստացվելու: Եթե անգամ օրինագիծ ընդունվի, ազգի մեջ պառակտում է մտցնելու»:

Հ. Հ.

# Ստեղծե՞լ օտարալեզու դպրոցներ, թե՞ բարձրացնել թեքումով դպրոցների մակարդակը




«Հայելի» ակումբում երեկ էկոլոգ Կարինե Դանիելյանը եւ ՀՀԿ խորհրդի անդամ Կարինե Աճեմյանը խոսեցին Հայաստանում օտարալեզու դպրոցների բացման վերաբերյալ: Ասուլիսի ժամանակ Կարինե Դանիելյանը ՀՀԿ-ին նաեւ խնդրեց հետեւել մի խնդրի, որի մասին բնապահպանն առաջին անգամ էր բարձրաձայնում.

«Բազմաթիվ հասարակական կազմակերպություններ, երբ գնում են արտասահման մասնակցելու ամենաբարձր միջազգային համաժողովներին, տեսնում են, որ մեր պետական պատվիրակություններն իրենց ֆունկցիաները պարզապես չեն կատարում, եւ այդտեղ նրանց օտար լեզուն չէ, որ խանգարում է: Նրանք ամենաշատը նստում են բացմանն ու հեռանում»:

Ինչ վերաբերում է օտարալեզու դպրոցների բացմանը, ըստ Կարինե Աճեմյանի, օրինագծում խոսվում է ընդամենը 15 օտարալեզու դպրոցի մասին: «Շատ հնարավոր է, որ վերանայվի եւ նվազեցվի այդ թիվը», նշեց Կ. Աճեմյանը եւ հավելեց. «Եթե Հանրապետական կուսակցությունը պաշտպանում է տվյալ նախագիծը, ուրեմն պաշտպանում է նաեւ առաջնորդը»:

Կարինե Դանիելյանի կարծիքով՝ օտարալեզու դպրոցներ բացելու փոխարեն, եթե անբավարար է թեքումով դպրոցների մակարդակը, լավ կլինի բարձրացնել դրա՛նց մակարդակը կամ կարելի է ստեղծել լեզուների ուսումնասիրման կենտրոններ, ինչն ընդունված է ամբողջ աշխարհում:

«Ես դեմ չեմ օտար լեզուների իմացությանը, հակառակը՝ լեզուների իմացությունը պարտադիր է: Ես սովորել եմ ռուսական դպրոցում, սակայն հայ լինելով՝ ես ձեւավորվում էի որպես ռուս: Մեր դպրոցում, եթե ընդմիջման ժամանակ երեխաներն իրար հետ խոսում էին հայերեն, դա համարվում էր կարգի խախտում: Հայերեն խոսելու իրավունք ունեինք միայն հայոց լեզվի դասերի ժամանակ», ասաց Կարինե Դանիելյանը:

Կարինե Աճեմյանն էլ նկատեց, որ մայրենի լեզուն նախ պետք է պահպանվի ընտանիքներում, հետո դպրոցներում:

Ըստ Կարինե Դանիելյանի՝ ռուսական դպրոց ավարտողների ընդամենը 1-3 տոկոսն է հետագայում դարձել հայրենասեր, իսկ մնացած շրջանավարտները հիմա կա՛մ Ռուսաստանում են, կա՛մ այլ երկրում, մի խոսքով՝ օտարացել են:

«Մարդուն զոռով, պարտադրանքով հնարավոր չէ իր երկրում պահել», հակադրվեց Կ. Աճեմյանը:

**«Ազգի»** հարցին՝ հետագայում արդյոք հնարավո՞ր է սահմանափակվել միայն 15 օտարալեզու դպրոցներով, թե՞ դրանց թիվը հետզհետե ավելանալու է, բանախոսները տվեցին իրարամերժ պատասխաններ: Կ. Աճեմյանը նշեց. «Չեմ կարծում, որ օտարալեզու դպրոցների շատ մեծ պահանջարկ կլինի», իսկ Կ. Դանիելյանի կարծիքով՝ այդպիսի դպրոցների պահանջարկը գնալով մեծանալու է:

Ի. Պ.

# Օտարալեզու դպրոցների նախագիծը խորհրդարանում միանշանակ չի ընդունվում

*1-ին էջից*

ԲՀԿ-ական **Վարդան Բոստանջյանը** գլխադասային հանձնաժողովի նախագահ Արտակ Դավթյանի անձնական դրական վերաբերմունքի մասին իմանալով նախագծի վերաբերյալ, կշտամբեց. «Ինչ է լինելու վաղը» հարցը թողած՝ մասնավոր դպրոց բացելու հարցն է պրոբլեմ դարձել մեզ մոտ», ասաց, հավելելով, թե լիքը գործ կա անելու երկրում, այնքան հրատապ հարցեր կան, որ պետք է քննարկման առարկա դառնային: «Որքան է հրատապ՝ դահլիճում նստածներն են որոշելու, քվեարկությունը ցույց կտա հրատապությունը», արձագանքեց Ա. Դավթյանը: Դահլիճում նստածներից միայն մոտավորապես տասը հասցրեցին տեսակետ հայտնել: «Ժառանգությունից» **Արմեն Մարտիրոսյանը** դեմ էր օրինագծին՝ նման դպրոցներից կոսմոպոլիտներ են դուրս գալու, պե՞տք են Հայաստանին կոսմոպոլիտներ: Ըստ նրա՝ այս օրենքը երկրում կաստաների ձեւավորման միջոց է. օտար լեզուների ուսուցմանը ոչ ոք դեմ չէ, հանրակրթական դպրոցներում պետք է ֆինանսավորումը շատացնել, թող առաջին դասարանից երկրորդ լեզու սովորեն, ոչ թե այս նախագիծը մեջտեղ բերեն: Նա նաեւ մեղադրեց Հայաստանի երեք նախագահներին՝ նրանց օրոք կրթական ոլորտի ձեւախեղումների համար, թե՝ դպրոցը քաղաքականացրիք, ուսուցիչներին ընտրակեղծարար դարձրիք:

ՀՀԿ խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանը նկատեց, թե խճողել այս հարցը հանրակրթության հետ սխալ է, հանրակրթությունը պետք է ընդունելի դարձնել հասարակության համար: Քաղաքական ուժերը թիրախ են դարձրել, որ ինչ-որ հայրենադավ գործողություն է տեղի ունենալու, թիրախներ են որոնում: Մտածենք, որ տեսակետներ են դեռ լսվելու, լսումների մեխանիզմը կա, առաջարկեց նա՝ նկատելով, թե մի մասին դավաճաններ, մի մասին հաղթականներ կոչելն այս պահին ծիծաղելի է. «Առաջարկներ արեք, ոչ թե կռվեք չեղած բանի դեմ, մենք էլ դեռ մեր տեսակետը չենք ամփոփել», նկատեց:

**Վիկտոր Դալլաքյանը** դեմ էր այս փոփոխություններին՝ դրանք հակասահմանադրական են, քանի որ Հայաստանի սահմանադրությունն ու օրենքները երկրի պետական լեզու եւ դպրոցներում կրթության լեզուն հայերենն են սահմանում: Պարտադրանք, ֆինանսական խնդիր կամ մոլորություն տեսնելով նախագծի շարժառիթի տակ, նա այն անվանեց «Նախագիծ 30 արծաթի կամ հայերին զոմբիացնելու մասին», առաջարկելով կրթական հայեցակարգ մշակել, դպրոցներին տվող պասվերներ ձեւակերպել, դրանից հետո ինչ-որ նախագիծ բերելու մասին մտածել:

**Լիլիթ Գալստյանը** նախ նկատեց, որ Հայաստանի խորհրդարան բերվող օրենքները կամ քաղաքական պատվեր ունեն իրենց մեջ, կամ բիզնես շահեր, եւ նշելով գործարար Ռուբեն Վարդանյանի՝ Դիլիջանում ռուսական դպրոց բացելու գաղափարը, նշեց, թե հանրակրթական ազգային դպրոցի վարկը պետք է բարձրացնել նախ, իսկ «այլընտրանքային, փորձարարական, հեղինակային» անվանումներն առանց սահմանումի գրչի մեկ հարվածով գրելը անընդունելի համարեց՝ դա հարվածում է մեր հոգեւոր անվտանգությանը: 800-ը նա բազմապատկեց 15-ով, այդքան աշակերտ է լինելու ամեն տարի, էլիտար բուծման արտադրամասի է վերածվելու այս դպրոցը, վճարունակ ծնողներով, մի քիչ էլ անցնի՝ գուցե երկրորդ պետական լեզու մտցնենք երկրում:

**Վահան Հովհաննիսյանը** առանձնացրեց համարյա բոլորի խոսքում հնչած այն հաստատականը, որ հանրակրթական դպրոցի մակարդակը ցածր է Հայաստանում: Նկատեց, որ մինչեւ հիմա էլ եղել են Հայաստանում օտարալեզու դպրոցներ, բայց անգամ ռեգիոնալ մակարդակ չեն ապահովել. «Հիմա եթե մենք չենք կարողանում մակարդակ ապահովել, ուրիշ ոլորտների նման կրթական ոլո՞րտն էլ պետք է օտարին տանք, անգլերենով սովորածը Հայաստանին ի՞նչ», ասաց: «Ուշքի եկեք, հաջորդ սերունդները մեզ չեն ների այս քայլի համար: Դա արվելու էր ազգային գաղափարախոսություն որդեգրած ուժի՞ օրոք», հարցրեց նրա գործընկեր **Արծվիկ Մինասյանը**:

**Տիգրան Թորոսյանը** նախ փորձեց հասկանալ օրինագծի նպատակը: Բերվում է թաիլանդական դպրոցի օրինակը, որը նույնպես ներդրվելու է. Թորոսյանը հարցրեց՝ արդյո՞ք ուսումնասիրվել է՝ ինչ երկիր է Թաիլանդը, ինչո՞վ է հայտնի, ինչու է այնտեղ այդպիսի դպրոց ներդրվել, եթե իմանանք, հազիվ թե այդ դպրոցը ներդնենք: Ըստ նրա՝ Հայաստանում որակյալ մասնագետի պահանջարկ չկա, այնպես որ ինքնանպատակ է օրինագիծը. եթե գիտնականը, գիտության դոկտորը 50 հազար դրամ աշխատավարձ է ստանում, ավելի ցածր, քան կառավարության ու Ազգային ժողովի վարորդների աշխատավարձը, անհեթեթ է խոսել կրթության որակից: Հանրակրթության որակի առումով նախ պետք է պատճառներն ուսումնասիրել, ոչ թե սկսել մի դպրոց կառուցելուց, որը հակասում է ՀՀ օրենքներին՝ եզը սայլից առաջ դնել չի կարելի: Իսկ նախորդ օրը Հայաստանի նախագահի խոսնակի այն մտքին ի պատասխան, թե նախագահը դրական է վերաբերվում Հայաստանում միջազգային չափանիշներին համապատասխանող մասնավոր կրթական հաստատություններ հիմնելու գաղափարին, քանի որ քննարկվում է ոչ թե օտարալեզու, այլ միջազգային չափանիշներին համապատասխան մի քանի մասնավոր դպրոց Հայաստանում հիմնելու խնդիրը, Տ. Թորոսյանը նկատեց, թե այդպիսի կարծիքներ հայտնողները հարվածի տակ են դնում նախագահին: Նա առաջարկեց հետ վերցնել նախագիծը:

**Ստեփան Սաֆարյանը** հիշեց Վազգեն Սարգսյանի ասածը՝ Հայաստանը որբի գլուխ չէ, որ ով ուզենա՝ վրան վարսավիրություն անի, եւ դա շուռ տվեց հայոց լեզվի վրա: Իր քաղաքական ուժը մասնավոր դպրոցների կողմնակից է, բայց դա կարելի է առանց մայր օրենքը փոխելու. «Փաթեթից հետ վերցրեք «Լեզվի մասին օրենքը», ասաց նա:

Մենք ընտրեցինք ռեպորտաժի ժանրը՝ ելույթ ունեցողների առավել շատ տեսակետները ներկայացնելով, թեեւ ասենք, որ մեծամասնության պահվածքը դեռ լիարժեք հայտնի չէ, գուցե նրանք մտափոխվեն. դա կիմացվի այս փոփոխությունների օրակարգով արտահերթ նիստում:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 10/06/2010 21:55 Page 1





# Աչքակապություն, կամ ո՞նց հասնել Հաագայի դատարան կամ դատարաններ

Երբ միջավայրն ամեն ինչ ընդունում է առանց կասկածի, միշտ հնարավոր է դառնում ուզածին հասնել անճշտությունների, աղավաղումների, անգամ կեղծիքի ու ստի միջոցով: Իսկ որ քաղաքականությունը այս բոլոր «զենքերից» առատորեն օգտվում է, ոչ մեկի համար նորություն չէ: Եվ թյուր կարծիքը, թե ստում ու կեղծում է միայն իշխանությունը, բազմիցս հերքվում է ապացույցներով, երբ որպես ընդդիմություն ներկայացող ուժերը եւս երկու դեպքում էլ տուժող հասարակությանը ճշմարտությունից հեռու երեւույթներ են մատուցում:

Վերջերս Հայ ազգային կոնգրեսը պաշտոնապես հաստատեց տեղեկատվությունը, թե ՀԱԿ-ը Ռոբերտ Քոչարյանի դեմ հայցն արդեն ուղարկել է Հաագայի միջազգային քրեական դատարան: Հայցին կից թղթածրարը բաղկացած է 280 էջից, իսկ դրան կցված փաստաթղթերը կազմում են ավելի քան 4 հազար 500 էջ:

Դրանց թվում են նաեւ ներկայումս Եվրոպայի մարդու իրավունքների դատարանում քննվող ավելի քան 40 գործերի մասին մանրամասն տեղեկությունները: Բացի փաստաթղթերից, հայցին կցված են հսկայական քանակությամբ տեսաձայնագրություններ, վկայություններ եւ այլն:

Նշված փաստաթղթերն ու տեսաձայնագրությունները վերաբերում են ոչ միայն 2008 թվականի մարտի 1-ին եւ 2-ին Երեւանի կենտրոնում տեղի ունեցած, այլեւ Քոչարյանի իշխանության տարիներին կատարված մի շարք աղմկոտ սպանություններին, Երեւանի կենտրոնի բնակիչներին իրենց տներից բռնի տեղահանելու եւ բազմաթիվ այլ փաստերի:

Հրաշալիորեն ներկայացվում է «ի նպաստ» հասարակությանը նախաձեռնած ինչ-որ քայլ, որ, սակայն, անհասկանալի հիմքեր ունի, եթե չասենք՝ ստահոդ է:

Միջազգային իրավունքի մասնագետների մեկնաբանությամբ եւ ոչ միայն նրանց խոսքերով, Հաագայի միջազգային քրեական դատարան Հայաստանից հայց չի կարող ներկայացվել այն պարզ պատճառով, որ Հայաստանը թեեւ ստորագրել է, բայց չի վավերացրել Հռոմի կանոնադրությունը: Եվ չի վավերացրել, քանի որ Սահմանադրական դատարանը անհամապատասխանություն է արձանագրել Հռոմի ստատուտի՝ Հռոմի կանոնադրության եւ ՀՀ սահմանադրության միջեւ:

Որեւէ հավանականություն, թե ՀԱԿ-ի դիմումը կարող էր ներկայացվել Հաագայում գործող մեկ այլ՝ ՄԱԿ-ի արդարադատության միջազգային դատարան, լինել չի կարող, քանի որ վերջինս քննում է միայն միջպետական վեճերը: Այս դատարանի պարագայում մարդկության դեմ ուղղված հանցագործություններում անհատներին մեղադրելու առնչությամբ որեւէ գործ քննվել չի կարող:

Որոշ մասնագետների ներկայացմամբ, հնարավոր է, որ Հաագայի քրեական միջազգային դատարան դիմում ներկայացվի, որը կվերաբերի Հայաստանին, բայց ոչ Հայաստանից, այլ, ասենք, ՄԱԿ-ի կողմից:

Այնուամենայնիվ, ստացվում է, որ ապատեղեկատվությունը իշխանության համար պայքարում անվերապահորեն օգտագործվող գործիք է, հատկապես որ մեծ մասամբ տեղեկությունները չեն ճշտվում: Սա էլ միշտ չէ, որ ոչ մասնագիտական մոտեցման արդյունք է, այլ ավելի հաճախ ժամանակի սղության ու այն միջավայրի արդյունք, որում տեղեկատվություն են սփռում հայրենի լրատվամիջոցները:

Օրերս սոցիալական ցանցերից մեկում թեթեւակի մի քննարկում էր, թե անգամ գրելիք նյութի ամսաթիվը ստուգման կարիք ունի այնպես, ինչպես շատ հրապարակումներում գրված շատ նյութեր: Հիրավի, հրաշալի է ասված, ընդ որում, կրկնակի ստուգման կարիք:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

3-ՐԴ ՈՒՂԵԳԻԾ

# Նախագահն ընդունել է Քերոլայն Քոքսին

Նախագահ Սերժ Սարգսյանը երեկ ընդունել է Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի նախկին փոխխոսնակ բարոնուհի Քերոլայն Քոքսին: Այս մասին տեղեկացնում է ՀՀ նախագահի մամլո գրասենյակը:

**Սերժ Սարգսյանն** ասել է, որ բարոնուհու եւ նրա համախոհների ավանդական դարձած այցելությունները Հայաստան եւ Արցախ, հայկական կողմի հետ նրանց արդյունավետ համագործակցությունը բարձր գնահատանքի են արժանի: «Մեկ անգամ եւս շնորհակալություն Ձեզ եւ Ձեր ընկերներին՝ երկար տարիների հետեւողական աշխատանքի համար», ասել է Նախագահը:



Բարոնուհի **Քոքսը** Նախագահ Սարգսյանին պատմել է իր՝ արդեն 70-րդ այցելության ընթացքում ստացած տպավորությունների մասին: Նա ասել է, որ ինչպես նախորդ այցերին, այնպես էլ այս անգամ ուրախությամբ արձանագրել է, որ թե՛ Երեւանում եւ թե՛ Ստեփանակերտում մեծ դրական փոփոխություններ են կատարվում:

Զրուցակիցներն անդրադարձել են նաեւ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի եւ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների վերջին զարգացումներին: Քերոլայն Քոքսն ասել է, որ միջազգային հանրությունը բարձր է գնահատում Հայաստանի՝ հարեւան երկրների հետ խնդիրները բանակցությունների եւ համագործակցության միջոցով լուծելու դիրքորոշումը: Սակայն, բարոնուհու խոսքով, «Հայաստանի զուսպ արձագանքը Ադրբեջանի ստահոդ ակտիվ քարոզչությանը վերջինիս հնարավորություն է տալիս հաճախ մոլորության մեջ գցելու նույն այդ հանրությանը»:

Հ. Ա.

# Բոյկոտի պայմաններում էլ հայերը նախընտրում են հանգստանալ Անթալիայում

Վերջերս մամուլում հրապարակումներ էին հայտնվել, որ իշխանությունն այս տարի արգելել է պաշտոնյաներին հանգստանալ Անթալիայում: Ասում էին նաեւ, որ պետական հիմնարկներում խիստ հսկողություն է սահմանվել, եւ աշխատողներին զգուշացրել են՝ «Գնացեք՝ ուր կցանկանաք, միայն ոչ Անթալիա»: Պահանջի հիմքում հայրենասիրական մղումն էր: Անթալիայում փող մի ծախսեք, քանի որ դրանից թուրքերը հարստանում են, զինվում եւ զինում ադրբեջանական բանակը: Նման հայտարարություններ հնչում էին նաեւ անցյալ տարի, ավելին՝ պատերին հայտնվեցին պաստառներ, որոնք բոյկոտում էին ուղեւորությունը դեպի Անթալիա: Մի շարք տուրիստական գործակալություններ այցելելով արդյունքում պարզվեց, որ այդ հայտարարությունները, համենայն դեպս նախորդ տարի, որեւէ ազդեցություն չեն ունեցել: «Դուբայ տուր» տուրիստական գործակալության տուրիստական գծով մենեջեր **Հերմինե Ալավերդյանը** նկատում է, որ այս տարի էլ մարդիկ հետաքրքրվում են, տոմսեր պատվիրում:

«Անցյալ տարի էլ էին արգելում, բայց շատերը դիմեցին մեր գործակալությանն ու հանգստացան Անթալիայում: Որեւէ տարբերություն նախորդ տարվա այս ժամանակահատվածի կապակցությամբ չենք նկատել: Հիմնականում Անթալիա են մեկնում այն տուրիստները, ովքեր նախորդ տարի իրենց հանգիստն անցկացրել են Քոբուլեթում կամ Բաթումում: Անցյալ տարի Անթալիա հանգստացողներն էլ մեկնում են Եվրոպա», ասաց նա:

Տուրիստական գործակալությունն արդեն երկու զույգի ճանապարհել է Անթալիա: «Սակայն չվերթները նոր են սկսվում, եւ նախորդ տարվա նման այս հուլիսին էլ կունենանք բազմաթիվ պատվերներ: Այսօրվանից արդեն զանգում են, հետաքրքրվում», նկատեց նա:

«Աերոտուր» տուրիստական գործակալության տուրիստական գծով մենեջեր **Սոնա Պետրոսյանն** ասում է, որ անցյալ տարվա այս ժամանակահատվածի համեմատությամբ նվազել է Անթալիա մեկնողների քանակը: «Գնային տարբերությունն այնքան էլ շատ չէ Անթալիայի եւ եվրոպական երկրների միջեւ: Անցյալ տարի գործակալությունը բազմաթիվ խմբեր է ուղարկել Անթալիա: Այս տարի դեռ չենք ճանապարհել, սակայն սեզոնը սկսվում է հուլիսից, եւ, վստահաբար, այդ ժամանակ կունենանք բազմաթիվ զբոսաշրջիկներ», ասաց նա:

Թե ինչու են հայերը մեկնում Անթալիա կամ Բաթում հանգստանալու, First travel գործակալության տնօրեն **Կարեն Անդրեասյանը** «Արմաս» ակումբում նկատեց, որ Հայաստանի հանգստյան գոտիներում հանգստանալը թանկ հաճույք է: Հանգստի համար բարձր գները միայն Հայաստանի սահմաններով չեն եզրափակվում: Օրինակ՝ Հայաստանից Անթալիա հանգստի մեկնելու փաթեթն ավելի թանկ է, քան Վրաստանից՝ Անթալիա: «Հայաստանում բոլոր ուղղությունների չվերթների գները թանկ են: Դրա մեղավորներն են ավիաընկերություններն ու շուկայում մենաշնորհային իրավիճակը: Տուրիզմի բնագավառում էլ, ինչպես մնացած ոլորտում, կա մենաշնորհ, եւ այն պետք է ջարդել»:

Որեւէ թիվ եւ փաստ չներկայացնելով՝ Անդրեասյանն ասաց, որ հայ զբոսաշրջիկների հետաքրքրությունը դեպի Անթալիա նվազել է: Հանգամանքը նա պայմանավորում է մի շարք քաղաքական ենթատեքստերով: Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերությունների եւ վերջին շրջանի իրադարձությունների պատճառով այս տարի զբոսաշրջիկներին նրանք Անթալիա փաթեթներ չեն առաջարկի:

Բոյկոտեն, թե ոչ, մարդիկ գնում են Անթալիա: Քարոզչությունը լավ բան է, եւ մարդկանց պետք է անընդհատ հիշեցնել, որ Անթալիա մեկնելով հարստացնում են թուրքական բանակը, սակայն անհրաժեշտ է խնդրին այլ լուծում տալ. Հայաստանում էժանացնել հանգստյան գոտիները: Ջերմուկում, Ծաղկաձորում, Դիլիջանում ու Սեւանում գներն այնպիսին են, որ միջին աշխատավարձով ապրող մարդը չի կարող հանգստանալ:

Հ. Հ.

# Փոխհատուցման համավճարային նոր եղանակը բժշկական կենտրոններում

ՀՀ կառավարությունը փոփոխություն է կատարել իր նախկին որոշումներից մեկում եւ հաստատել պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության եւ սպասարկման շրջանակներում մատուցվող ծառայությունների փոխհատուցման համավճարային նոր եղանակի փորձնական կիրառման կարգը: Համավճարը պետության երաշխավորած բուժօգնության շրջանակում հիվանդի բուժման համար սահմանված գնի եւ բուժհաստատության կողմից նույն ծառայության համար հաշվարկված իրական ծախսի տարբերությունն է, որը վճարում է հիվանդը: Համավճարից գոյացած գումարների 65 տոկոսը կհատկացվի բուժաշխատողներին աշխատավարձի տեսքով: Փորձնական պիլոտային ծրագիրը կներդրվի «Արաբկիր» բժկ. կենտրոնում՝ հուլիսի 1-ից: Իսկ այնուհետեւ նաեւ «Էրեբունի», «Գրիգոր Լուսավորիչ», «Արմենիա» բժշկական կենտրոններում: Համավճարի ներդրմամբ նաեւ կբարելավվի բուժհաստատության ֆինանսական հոսքերի կառավարումը, կբարձրանա բժշկական ծառայությունների որակը եւ օրինական դաշտ կբերվի ոչ պաշտոնական վճարումների ծավալը: ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը կարեւորել է փորձարարական նոր եղանակի ներդրումը, որով լուրջ բարեփոխում է սկսվում ամբողջ ոլորտում:

Ս. ՄԱԿԱՐՅԱՆ

# Լոնդոնում քննարկել են ժխտողական քաղաքականության վերանայման խնդիրները

Ըստ Ռաշիդ Զարաքոլուի՝ խմբագրությանս հասցեագրած հաղորդագրության, հունիսի 8-ին Վեստմինստերի՝ բրիտանական խորհրդարանի «Գրիմոնդ դահլիճում» տեղի է ունեցել «Վերանայելով Թուրքիայի նկատմամբ մեր քաղաքականությունը» թեմայի քննարկում, որին մասնակցել են Սաիտ Չեւեթօղլուն (ցեղասպանագետ Թուրքիայից, որը կազմակերպել էր Անկարայում ապրիլքսանչորսյան կոնֆերանսը), Դեզմոնդ Ֆերնանդեսը (ցեղասպանության, հոգեբանական պատերազմների եւ խորքային քաղաքականության վերաբերյալ գործերի հեղինակ) եւ Էյլիան Ուիլյամսը: Չեւեթօղլուն խոսել է «ժխտողականության ակունքները» թեմայով: Ֆերնանդեսը անդրադարձել է «Մեր օրերում մարդու իրավունքների խախտումները եւ դատավարությունները Թուրքիայում» նյութին, իսկ Ուիլյամսը քննարկել է «Արեւմտյան Հայաստանը վերակառուցելու թուրքական նոր քաղաքականության հնարավորությունները» թեզը:

Ընդհանուր առմամբ քննարկումը անցել է «Ժխտողականության մեր քաղաքականությունը արդյոք նպաստե՞լ է մարդու իրավունքների առավել ոտնահարմանը» ենթավերնագրի շրջանակներում: Միջոցառմանը, որի հովանավորն էր Լանելլիից (Ուելս) պատգամավոր Նիա Գրիֆիթը, կայացել է նաեւ Դեզմոնդ Ֆերնանդեսի Ստոկհոլմում հրատարակված «Արդիականացումը եւ քրդերի ու «այլոց» ցեղասպանությունը Թուրքիայում: 1915-ին նախորդած եւ հետեւած պատմական ժամանակաշրջանը» գրքի շնորհանդեսը:

Հ. Ծ.

# Moodys գործակալությունը «Յունիբանկ»-ին վարկանիշ է շնորհել

2010թ.-ի հունիսի սկզբին Moodys միջազգային վարկանիշային գործակալությունը «Յունիբանկ» ՓԲԸ-ին շնորհել է ֆինանսական կայունության E+ , արտարժույթով և ազգային դրամով ավանդների Ba3 երկարաժամկետ եւ NP կարճաժամկետ վարկանիշերը: Բոլոր վարկանիշերն ունեն «Կայուն» կանխատեսումը, ինչը վկայում է հայաստանյան բանկային շուկայում «Յունիբանկ»-ի հաստատուն դիրքի մասին:

Վարկանիշների շնորհումը արտացոլում է «Յունիբանկ»-ի կայուն ֆինանսական վիճակը, զարգացման դրական դինամիկան եւ հաճախորդների զգալի զանգվածը: Moodys դրական է գնահատել բանկի կապիտալիզացման հուսալի մակարդակը եւ դրամական փոխանցումների շուկայում զբաղեցրած գերակա դիրքը, հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ վերջինիս ծավալը կազմում է Հայաստանի ՀՆԱ-ի 20 տոկոսը: Հիշեցնենք, որ «Յունիստրիմ»-ին բաժին է ընկնում դրամական փոխանցումների շուկայի ավելի քան 50 տոկոսը, ինչը «Յունիբանկ»-ի համար լրացուցիչ հնարավորություններ է ընձեռում մանրածախ բանկային շուկայում: Moodys գործակալությունը նշել է, որ դրամական փոխանցումների շուկայում «Յունիբանկ»-ի առաջնային դիրքը բանկին լրացուցիչ հնարավորություն է ընձեռում մեծ ծավալների ավանդների ներգրավման եւ ծառայությունների խաչաձեւ վաճառքի (cross-selling) համար:

«Յունիբանկ»-ի դիրքերը ՀՀ բանկային համակարգում 2009թ.-ի արդյունքներով հետեւյալն են՝ ակտիվներ՝ 5-րդ տեղը, ֆիզիկական անձանց վարկավորում՝ 2-րդ տեղը, հիփոթեքային վարկավորում՝ 2-րդ տեղը, ավտովարկավորում՝ 1-ին տեղը, ժամկետային ավանդներ՝ 1-ին տեղը, դրամական փոխանցումներ՝ 1-ին տեղը:

AZG NEW PDF.qxd 10/06/2010 21:55 Page 1



Միասնական քննություններ կոչված երեւույթը թերեւս ունի առավելություններ, սակայն վերջին մի քանի տարիների ընթացքը ցույց է տալիս եւ ապացուցում, որ այն ոչ միայն հեռու է կատարյալ կամ անթերի լինելուց, այլեւ ընդունելի համարվելու չափ գոնե հաջողված չէ։ Վկան՝ արդեն ավանդույթի ուժ ստացող մասսայական դժգոհությունները գրեթե բոլոր առարկաների գծով։ Ինքնին հասկանալի է, որ այդ դժգոհությունները միշտ չէ, որ օբյեկտիվ են։ Անհաջողության մատնված դիմորդը պատճառները որոնում է իրենից դուրս՝ մեղքը բարդելով կա՛մ առաջադրված հանձնարարությունների բարդության կա՛մ պահանջների խրթին, երբեմն նաեւ սխալ, անհասկանալի ձեւակերպումների, ծրագրային շեղումների, դպրոցական դասագրքերի որակի ու հազար ու մի այլ իրողությունների վրա։ Սակայն չի կարելի ուրանալ նաեւ այն, որ դժվարությունների մի զգալի, եթե չասեմ՝ որոշիչ մասը, լուրջ մտահոգությունների տեղիք տալիս է։ Արդեն նկատելի է դառնում մի տարօրինակ մտայնություն. քննական թեստերի կազմումը վերածվում է մրցության դիմորդի եւ թեստը կազմողների միջեւ։ Թվում է, թե նպատակը ոչ թե դիմորդի իմացության, այլ չիմացության ստուգումն է մի կողմից, իսկ մյուս կողմից կարծես թեստ կազմողները ավելի շատ փորձում են ցույց տալ իրենց գիտելիքները եւ ապացուցել, որ դիմորդից ավելի լավ են տիրապետում քննական առարկայի նրբություններին։ Իսկ դա մի՞թե ապացուցման կարիք ունի։

Տողերիս հեղինակն այնքան էլ միամիտ չէ, որ կարծի, թե թեստ կազմելը, այն էլ անթերի, հեշտ գործ է։ Այն պահանջում է ոչ միայն գիտելիքներ։ Թեստեր կազմողը գրեթե կատարյալ չափով պիտի տիրապետի թե՛ դպրոցական ծրագրերին ու նրանցում առաջադրված պահանջներին, թե՛, ինչո՞ւ ոչ, դպրոցականի հոգեբանությանը։ Այլապես ի՞նչ նպատակով կամ հիմնավորումով էր այս կարիքավոր պետությունը մեծ ծախսերի գնով մասնագետներ գործուղում եվրոպական երկրներ (ինձ հասած տվյալներով՝ Անգլիա)՝ նրանց փորձը ուսումնասիրելու եւ մեզանում ներդնելու համար։ Սակայն, միանգամից նշեմ, որ այդ փորձը ուղղակի փորձանք դարձավ դիմորդների գլխին։ Ամեն տարի հրապարակի վրա հայտնվում են թեստերի տարբեր ժողովածուներ՝ ամենատարբեր մոտեցումներով ու հարցադրումներով, եւ որ ամենակարեւորն է՝ աղաղակող սխալներով, այն էլ այնպիսի, որ ակամա կասկած են առաջացնում հեղինակների մասնագիտական կարողությունների վերաբերյալ։ Օրինակները բազմաթիվ են, իսկ բացառությունները՝ չնչին։ Եվ դիմորդներն էլ, բանաստեղծի խոսքով ասած, մնում են շլմորած կանգնած, թե՝ «Տե՛ր Աստված, բա ո՞նց անեմ»։ Ուսումնական յուրաքանչյուր ձեռնարկ պետք է զերծ լինի ամենաաննշան, անգամ վրիպակային սխալներից։ Դրանք պարտադիր պիտի ենթարկվեն որեւէ իրավասու մարմնի փորձաքննությանը, մինչդեռ տեղից վեր կացողը «շուկայական» կոչվող օրենքներով հրատարակում է թեստերի «ժողովածուներ», որոնցով պարապած դիմորդներն ավելի շուտ գիտելիքներ են կորցնում, քան ձեռք բերում։ Այս ամենը զավեշտալի կթվար, եթե ողբերգական չլիներ։ Վկան՝ այս տարվա հունիսի 4-ին անցկացված «Հայոց լեզու եւ գրականություն» առարկայի քննությունները։ Դժգոհությունների եւ բողոքների մեծ ալիքը որոշակի, եթե չասեմ մեծ, հիմք ունի։ Քննության համար առաջադրված թեստերը ոչ միայն անթերի չէին (անթերի թեստեր, որքան էլ զարմանալի հնչի, չեն լինում), այլեւ, մեղմ ասած, հեռու են հաջողված լինելուց։ Երկու վաստակաշատ ուսուցչուհիների դժգոհությունը («Շանթ» հեռուստաընկերության եթերից) որոշակիորեն հիմնավորված էր, սակայն պնդումը, թե թեստերը հանիրավի բարդացված էին, մեղմ ասած՝ շատ էին մեղմ։ Թեստը կարող է բարդ համարվել, եթե առաջադրում է լուծման համար մեծ ճիգեր ու ժամանակ պահանջող խնդիրներ։ Իսկ եթե այդ խնդիրների պահանջները տրված են անհասկանալի ձեւակերպումներով կամ ծրագրային շեղումներով, ապա թեստը պարզապես սխալ է եւ խոտան։ Իսկ քննական թեստերում այդպիսիք, դժբախտաբար, քիչ չեն։ Որպեսզի ամբողջ ասվածը պարզ հայտարարություն չթվա, բերեմ միայն մի քանի օրինակներ քննական 1-ին եւ 2-րդ թեստերից՝ հպանցիկ բացատրություններով (3-րդ եւ 4-րդ թեստերից օրինակներ չեն բերվում, քանի որ դրանք 1-ին եւ 2-րդ թեստերի տարբերակներ են)։

# Միասնական քննություննե՞ր,

## Թեստ 1
### Ա տարբերակ

**17**. Ճիշտ պատասխան է համարվում 3-րդը (**փող, փողավոր**)։

Իրականում համանուններ են նաեւ 1-ին շարքի երկու բառերը (**ցող, ցողուն**) եւ 2-րդ շարքի երկու բառերը (**ամպ, ամպեր**)։ Այդ բառերը համապատասխան բացատրություններով նշված են Երջանիկ Գեւորգյանի «Ժամանակակից հայոց լեզվի համանունների բառարանում» (Ե. 1978)։

«1. ԱՄՊ 1. Թուխպ 2. Մռայլություն 3. Վտանգ 4. Ամպոտ։

2. ԱՄՊ Արորի կորնթարդ երկար փայտը։

3. ԱՄՊ Տե՛ս 4. ՀԱՄ

1. ԱՄՊԵՐ Էլեկտրական հոսանքի ուժի միավոր։

2. ԱՄՊԵՐ ԱՄՊ գոյականի հոգնակի թվի անորոշ ուղղականի հոլովաձեւը» (էջ 38)։

«1. ՑՈՂ 1. Ցողուն 2. Ցողունի հանգույցը, ծունկ։

2. ՑՈՂ 1. Շաղ 2. բարակ անձրեւ 3. Շիթ

3. ՑՈՂ Ճառագայթ, ցոլք։

4. ՑՈՂ Ճահճային բույս՝ ցողախոտ։

1. ՑՈՂՈՒՆ Բույսի ցողուն

2. ՑՈՂՈՒՆ Ցողաշատ, ցողալից։ (էջ 336)

Այսպիսով՝ Ա 17-ը ունի 3 ճիշտ պատասխան։ Լավագույն լուծումը կլինի առաջադրանքի խոտանումը։

**22**. Առաջադրանքի պահանջն է՝ «Ո՞ր շարքում են **միայն առարկայի հատկանիշ** ցույց տվող դերանունները»։

Ճիշտ պատասխան է համարվում 1-ը, որի բառերն են՝ **ամեն մի, այսչափ, որքա՞ն**։

Ըստ դպրոցական դասագրքի՝ **այսչափ** եւ **որքա՞ն** դերանունները մատնանշում են ոչ միայն առարկայի, այլեւ գործողության հատկանիշ (չափ, քանակ)։ Ահա համապատասխան մեջբերումները Ֆ. Խլղաթյանի «Հայոց լեզու» 5-րդ դասարանի դասագրքից (Ե., 1999)

«Առարկայի եւ **գործողության** չափ, քանակ մատնանշող - այսքան, այդքան, այնքան, նույնքան, **այսչափ,** այդչափ, այնչափ, նույնչափ» (էջ 139)

«Այսքան, այդքան, այնքան, նույնքան, **այսչափ,** այդչափ, այնչափ, նույնչափ դերանունները գործածվում են թե՛ որպես գոյականի, թե՛ որպես **բայի լրացում**» (էջ 141)։

Մանվել Ասատրյանի «Ժամանակակից հայոց լեզու» (Ե. 2004) բուհական ձեռնարկում նշվում է, որ **քան** արմատով կազմված մյուս հարցական դերանունների նման **որքա՞ն** դերանունը արտահայտում է հարցում «կամ առարկայի քանակային հատկանիշի, կամ գործողության (հատկանիշի) դրսեւորման չափի մասին»։ Երկրորդ դեպքում այն դառնում է չափի պարագա, օրինակ՝ «Որքա՞ն աշխատեց», «Որքա՞ն խմեց» (էջ 180)։

Հետեւաբար սխալ է քննական թեստի այն պնդումը, թե **այսչափ** եւ **որքա՞ն** դերանունները ցույց են տալիս միայն առարկայի հատկանիշ։

Այսպիսով՝ Ա 22 առաջադրանքի չորս պատասխաններն էլ սխալ են, եւ բոլոր պատասխանները պետք է համարվեն ճիշտ։

**31**. Ճիշտ պատասխան է համարվում 1-ը։

Այդ տարբերության մեջ իսկապես չկա համաձայնության սխալ, բայց նախադասություններից մեկում առկա է կետադրական սխալ, որը շփոթեցնում է դիմորդին եւ նրա մեջ կասկած առաջացնում ճիշտ լուծման իրավացիության հարցում։

Սխալ կետադրված նախադասությունն է՝ «Վանականների խումբը գիշերը քայլում էր, **ցերեկը** թաքնվում որեւէ ապահով տեղում»։ **Ցերեկը** բառի վրա պետք է դրվեր բութ, որովհետեւ զեղչված է օժանդակ բայը։ Եվ քանի որ էր բայը իր քերականական հատկանիշներով անմիջականորեն կապված է առաջադրանքի պահանջի՝ համաձայնության հետ, քննական թեստի հեղինակների մասնագիտական խոտանը կամ դիտավորությունը մոլորության մեջ է գցել դիմորդներին։

Ա 31 - ը ճիշտ պատասխան չունի, ուստի պիտի խոտանվի։

**42**. Լ. Շանթի «Հին աստվածներ» դրամայի վերջնամասից բերված մեջբերումներին վերաբերող այս առաջադրանքը հակասում է Ուղեցույցի պահանջներին։ Հայ գրականությանը վերաբերող պարզաբանումների «Մեջբերումներ» բաժնում Ուղեցույցը հստակորեն խոսում է միայն «գրական ստեղծագործություններից (արձակ կամ չափածո) **դասագրքում** կատարված մեջբերումների» իմացության մասին (էջ 8)։

Դասագրքից դուրս եղած մեջբերումների ընդգրկումը քննական թեստում կամայականություն է, ենթադրում է հայ գրականության բնագրերի հազարավոր էջերի անգիր իմացություն։

**43**. Հայ բանաստեղծների գործերից տրված չորս մեջբերումներից երեքը չկան դասագրքում։ Սա հակասում է Ուղեցույցի պահանջին եւ նմուշներին։ Բացի այդ՝ հատվածները կետադրված են սխալներով (օրինակ՝ «Մանկլավիկներ ու նաժիշտներ ցնծալից նվագում են, ու երգում են, ու պարում» նախադասության երկու ավելորդ ստորակետերը), որոնք շփոթեցրել են դիմորդներին։

Ուղեցույցին հակասելու եւ մասնագիտական խոտան պարունակելու պատճառով Ա 43 հարցի բոլոր պատասխանները պետք է համարվեն ճիշտ։

**45**. Քննական թեստը առաջադրել է բանաստեղծության անգիր իմացության ստուգման մի ձեւ, որ լիովին հակասում է Ուղեցույցին։ Տարբեր, ոչ հարեւան տողերի հերթականությունը որոշելու պահանջը աշխարհում երբեւէ չհանդիպող ձեւ է։

Մեթոդական սխալը ավելի է ընդգծվում նրանով, որ առաջադրանքում առկա են ուղղագրական սխալներ։ Նախ՝ սխալ է տրված հենց Վարուժանի բանաստեղծության վերնագիրը. «**Հունձք կը ժողվեմը**»-ը դարձել է «**Հունձք կժողվեմ**», ապա՝ «**Կաքավը կու լա**» տողը դարձել է «**Կաքավը կուլա**»՝ աղավաղելով բառապատկերն ու տողի իմաստը։

Մեթոդական եւ ուղղագրական սխալների պատճառով Ա 45 առաջադրանքի բոլոր պատասխանները պետք է համարվեն ճիշտ։

**46**. Էապես սխալ առաջադրանք է։ Ուղեցույցը սահմանում է. «Հայ գրականության փաստական նյութի իմացությունը ստուգվում է հիմնականում Ա մակարդակում ներկայացված առաջադրանքներով, իսկ դիմորդի վերլուծական կարողությունները՝ գերազանցապես Բ մակարդակում ստեղծագործության գաղափարական-բովանդակային կամ կառուցվածքային եւ գեղարվեստական յուրահատկությունների վերաբերյալ առաջադրանքներով» (էջ 10)։

Ա 46-ը վերաբերում է գրական ժանրերին, զուտ վերլուծական հարց է եւ պետք է լիներ Բ մակարդակում։ Այսինքն՝ կոպտորեն խախտված է թեստի կառուցվածքը։

Առկա են նաեւ մասնագիտական եւ լեզվական կոպիտ սխալներ։ Դրաման բնորոշված է որպես «**թատերական ժանր**», մինչդեռ թե՛ ընդհանրապես, թե՛ դպրոցական դասագրքում այն բնութագրվում է որպես «**դրամատուրգիայի**» ժանր։

Իսկ ահա քնարաէպիկական պոեմի լրիվ բնորոշումը՝ ըստ թեստի. «**Չափածո մեծ ծավալի ստեղծագործություն է**, որտեղ կա դիպաշար. այդ դիպաշարը **երբեմն** ուղեկցվում է հեղինակային միջամտություններով»։ Բնորոշման առաջին մասը տրված է շարադասական կոպիտ սխալով (պետք է լիներ՝ «**մեծ ծավալի չափածո ստեղծագործություն է**»), իսկ **երբեմն** բառի առկայությունը, լեզվականից բացի, ստեղծում է նաեւ մասնագիտական- գրականագիտական մեծ սխալ։ Ստացվում է, որ քնարաէպիկական պոեմը **երբեմն** էլ կարող է **չուղեկցվել** հեղինակային միջամտություններով։ Բայց դա արդեն էպիկական պոեմի բնորոշումն է։ Այսինքն՝ ժանրերից առնվազն երկուսի սահմանումը թեստում տրված է սխալ, եւ նույնիսկ Բ մակարդակում լինելու դեպքում Ա 46-ի բոլոր պատասխանները պետք է համարվեին սխալ։

### Բ մակարդակ

**56**. Համանուն բառերի բացատրությունները կամայական են եւ մոտավոր։ **Հույլ**-ը բացատրված է որպես «աստղաբույլ»։ Օրինակ՝ Աղայանի բառարանում բառը նման իմաստ չունի, իսկ Երջ. Գեւորգյանի համանունների բառարանում դա ընդամենը 3-րդ իմաստն է։ «**Մայր**» բառը նշված է «ծառատեսակ» բացատրությամբ, որ մեղմ ասած հազվադեպ գործածվող ձեւ է, իսկ երկրորդ՝ «մթություն» բացատրությունը արձանագրված չէ հանրահայտ բառարաններում (սա Ուղեցույցի պարտադիր պահանջ է), իսկ ըստ մի բառարանի՝ այդ իմաստը կա միայն **մայր մտնել** դարձվածքի մեջ։

Հազվադեպ գործածվող բառերի ընդգրկմամբ եւ դրանց անորոշ բացատրություններով Ա 56-ը թեստային խոտան է եւ ենթակա է վերանայման։

**57**. Քննական թեստը պահանջում է, որ դիմորդը **ախտ** եւ **աղտ** բառերը համարի հարանուն։ Սա բացահայտ սխալ է, որովհետեւ ըստ մասնագիտական բոլոր աղբյուրների՝ դրանք համանուն են (սա թեստում նշված է որպես սխալ պատասխան)։

Դպրոցական դասագիրքը նշված բառազույգը տալիս է հենց «Համանուններ» բաժնում՝ որպես համահունչ համանուններ. «**Համահունչ** են կոչվում տարբեր ձեւով գրվող, բայց միատեսակ արտասանվող բառերը. օրինակ՝ **աղտ - ախտ**» (Գ. Ջահուկյան, Ֆ. Խլղաթյան, Հայոց լեզու, 9-րդ դաս., Ե. 1998, էջ 12)։

Ա 57-ի գնահատականը միանշանակ փոփոխելի է։

**72** Ըստ քննական թեստի՝ կետադրական այս առաջադրանքում բութ պիտի դրվի 4-րդ թվաշանի տեղում.

«Քաղաքում կա միայն երկու բաղնիք (3) երկուսն էլ (4) ասիական»։

Թեստի հեղինակների կարծիքով այս նախադասությունը կետադրվում է այսպես.

«Քաղաքում կա միայն երկու բաղնիք, երկուսն էլ՝ ասիական»։ Բայց կետադրությունը գրեթե մաթեմատիկական ճշգրտությամբ որոշվող երեւույթ է եւ ոչ թե որեւէ մեկի քմահաճույքը։ Ո՞ր կանոնով է **էլ** բառի վրա բութ դրվում։ Միակ հավանական բացատրությունը կարող է լինել զեղչված ստորոգյալի կանոնը։ Բայց այդ դեպքում ստացվում է «երկուսն էլ **կա** ասիական» նախադասություն, որ անհեթեթություն է։

Ճիշտն այն է, որ նման կառույցները վաղուց համարվում են հետադաս որոշիչ։ Օրինակ՝ երկար տարիներ հայերենի քննությունը անցկացվել է հայտնի շտեմարանով, որի 54-րդ համր բնագրում կա մի նախադասություն՝ մշտապես ճիշտ համարված այսպիսի կետադրությամբ. «Երբ կերպասե վարագույրները հետ գնացին, հայտնվեցին Արծրունյաց տիկինը՝ Մեռուժանի մայրը, կինը, երեխաները՝ ամենքն էլ սգավորի հագուստով»։

Այս տրամաբանությամբ էլ Բ 72-ի վերոհիշյալ նախադասության միակ հնարավոր կետադրությունն է հետեւյալը.

«Քաղաքում կա միայն երկու բաղնիք՝ երկուսն էլ ասիական»։ Այդ դեպքում Բ 72-ի բոլոր չորս պատասխանները դառնում են սխալ, այսինքն՝ բոլոր դիմորդների պատասխանները պետք է համարվեն ճիշտ։

Օրինակներ էլի կան, սակայն բավարարվենք այսքանով։ Նշեմ միայն, որ Ա 42-ի առաջադրանքի նպատակը նաեւ անհասկանալի է։ Նախ դրանով դիմորդի ի՞նչն է ստուգվում. հիշողությո՞ւնը։ Իսկ կա՞ արդյոք Հայաստանում ոչ թե մի դիմորդ, այլ գիտական պատկառելի կոչումների տեր գեթ մի շանթագետ, որ ճշգրիտ հիշի Շանթի հայտնի դրամայի վերջնամասի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ հատվածների՝ միմյանց շատ մոտ եւ նման արտահայտությունների կոնկրետ դասավորումները։ Մանավանդ, որ առաջադրանքի 2-րդ կեսը մեջբերված է շփոթության տանող կրճատմամբ՝ «Սիմոն Վանական- (կես մը գետնեն բարձրանալով, սարսափահար ու խեղդված ձայնով) Կորա՛վ. կորա՛վ իր հոգին...» հատվածի բացթողումով։ Կամ 45 առաջադրանքը։ Ի՞նչ հասկանա դիմորդը «Կաքավը կուլա» ձեւից։ Որ կաքավը ջրի փա՞րչ է, ջրամա՞ն, թե՞ լաց է լինում։ Դիմորդը կետադրական եւ ուղղագրական սխալի համար պատժվում է 0.25 միավորով, իսկ թեստ կազմողնե՞րը։ Նույնն է պատկերը նաեւ Թեստ 2-ում։

# Թե՞ թեստային զավեշտադրամա

## Ա մակարդակ

**13**. Հայոց լեզվի եւ հայ գրականության Ուղեցույցը սահմանում է, որ «քննական առաջադրանքներում չեն ընդգրկվելու այնպիսի հարցեր, որոնք կապված են» «խոսակցական» ձեւերի հետ (էջ 6):

Մեթոդական առումով անհարիր լինելով Ուղեցույցին եւ հայերենի քննական ավանդույթին (դեռ երբեք դարձվածքների հետ կապված դժվարագույն հարցը չի մասուցվել այնպես, որ դիմորդը եւ՛ ինքը կազմի, եւ՛ հաշվի կազմվող դարձվածների քանակը)՝ այս առաջադրանքը պարունակում է օրենքի կոպտագույն խախտում: Բանն այն է, որ **ճամփա** եւ կորցնել բառերով կարող է կազմվել միայն **ճամփեն կորցնել** դարձվածքը, որը դարձվածաբանական բառարանում նշված է իբրեւ խոսակցական ձեւ (Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե. 1975, էջ 398):

Ուղեցույցի պահանջը բացահայտորեն խախտելու համար Ա 13ի բոլոր պատասխանները պետք է համարվեն ճիշտ:

**35** Խախտված է Ուղեցույցի ամենից հայտնի տարրական պահանջը. «Քննական առաջադրանքներում չեն ընդգրկվելու այնպիսի հարցեր, որոնք կապված են զուգաձեւությունների հետ» (էջ 6):

Ճիշտ համարված նախադասության մեջ առկա է հանրահայտ զուգաձեւություն. «Զգալով, որ իր գործը լավ է կատարել՝– Անանիան մի անգամ էլ...»: Ստորադաս նախադասության տրոհման կանոնով ճիշտ է համարվում նաեւ **կատարել** բառից հետո ստորակետ դնելը:

Քանի որ խախտվել է քննական օրենքը, դրվել է զուգաձեւություն պարունակող օրինակ, այն էլ ճիշտ համարվող նախադասության մեջ, Ա 35-ի բոլոր պատասխանները պետք է համարվեն ճիշտ:

**38**. Հայագիտության օտարազգի երախտավորներին վերաբերող հարցը դուրս է դպրոցական ծրագրից եւ Ուղեցույցի պահանջներից:

10-րդ դասարանի դպրոցական դասագրքի (Գ. Ջահուկյան, Ֆ. Խլղաթյան, Հայոց լեզու, 10-րդ դաս., Ե. 1998) «Ընդհանուր գիտելիքներ հայոց լեզվի մասին» գլխի ( էջ 47 - 64) որոշ էջերում «Հայագիտության օտարազգի երախտավորներ» խորագրի ներքո ներայացվում են մի շարք հայագետների վերաբերող կենսագրական տեղեկություններ: Բայց դրանք տրվում են իբրեւ ուսումնաօժանդակ հետաքրքրաշարժ նյութեր եւ ոչ որպես դասանյութ:

Ապացույցն այն է, որ դասագրքի բովանդակության մեջ (էջ 134) հայագետների մասին որեւէ վերնագիր չկա: Եվ դա բնական է. մի՞թե **Ֆեյդին** եւ **Կարստը** հայոց լեզվի մասին ընդհանուր գիտելիքների մաս են:

Ա 38-ը ծրագրից դուրս, խոտան հարց է:

Բոլոր պատասխանները պետք է համարվեն ճիշտ:

**40**. Հարցի բոլոր չորս պատասխաններն էլ սխալ են:

Ըստ կազմողների՝ ճիշտ պատասխանն է՝ «Կնոջ հետ գնաց Բաղդադ»: Բայց այդ մասին հիշատակությունը, որ տեղ է գտել առաջին ճյուղի վերջում («Բաղդասար էլավ, զիր կին առավ, գնաց Բաղդադ»), իրականում վերջինը չէ:

Այն տեղ է գտել «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագրի 1981 թվականի հրատարակության 90-րդ էջում: Նույն հրատարակության 311-րդ էջում պատմվում է, որ չորրորդ ճյուղի գլխավոր հերոս Փոքր Մհերը իր ճամփորդությունների ընթացքում հասնում է Բաղդադ եւ այցելում Բաղդասարի գերեզմանին: Հանդիպում է մի ծերունու եւ հարցնում.

«Ասաց. - Բաղդասարի գերեզման որտե՞ղ է:

Ասաց. - Թագավորի սենեկի դեմն է:

Մհեր ասաց. - Բաղդասար մեր ազգեն է, Սասնա տնեն է.

Էնոր գերեզման ինձի նշանց կը տա՞ս:

Նշանց էտու, տարավ էնտեղ, տեսավ»:

Ահա սա է Բաղդասարին վերաբերող վերջին դրվագը, ոչ թե քննական թեստում նշվածը:

Ուստի Ա 40 առաջադրանքի բոլոր չորս պատասխանները պետք է համարել ճիշտ:

**41**. «Աշխարհ գութանի մոս կը լիանա» (թեստում՝ **կլիանա** սխալագրությամբ) միտքը դասագրքում մեջբերված է, բայց չի ասվում, թե ում են ասում: Սխալն այն է, որ գութանավորը այդ խոսքերով դիմում է ոչ թե Մեծ Մհերին, այլ Սասունցի Դավիթին: Բայց առաջադրանքը հակասում է Ուղեցույցին:

«Հերոսներ, կերպարներ, գործող անձինք, դիպաշար» բաժնում Ուղեցույցը հստակորեն սահմանում է. «Քննական թեստերում հարցի կամայական լուծումներից խուսափելու համար պետք է առաջնորդվել հետեւյալ սկզբունքով. վերը նշված խնդիրների վերաբերյալ առաջադրանքներ պետք է տրվեն միայն այնքանով, որքանով դրանք **հանգամանորեն,** այսինքն՝ **որոշակի մանրամասնություններով** եւ **ըստ էության** են ներկայացված դասագրքում» (էջ 9):

Դիմորդին այսպես է կողմնորոշում իր Ուղեցույցը (ընդ որում՝ արդեն երրորդ տարին), եւ նա պարտավոր չէ բոլոր մանրուքներով հիշել գրական բնագրերի հազարավոր էջերը: Զավեշտն այն է, որ այսպիսի «կամայական լուծումներ» դիմորդներին պարտադրում են մասնագետներ, որ իրենք չեն հիշում (գիրքը դիմացները դրած) էպոսի սյուժեն (տե՛ս Ա 40):

Որպես Ուղեցույցի սկզբունքները խախտող առաջադրանք՝ Ա 41-ը խոտան է եւ ենթակա է վերանայման:

**44**. Համազասպուհու եւ Վահան Մամիկոնյանի հանդիպման մասին դասագրքում ակնարկ անգամ չկա, ուստի հարցը Ուղեցույցին հակասող կամայական լուծում է:

Բոլոր պատասխանները պետք է համարվեն ճիշտ:

**45**. Քննական թեստը առաջադրել է բանաստեղծության անգիր

իմացության ստուգման մի ձեւ, որ լիովին հակասում է Ուղեցույցին: Տարբեր, ոչ հարեւան տողերի հերթականությունը որոշելու պահանջը աշխարհում երբեւէ չհանդիպող ձեւ է:

Ասվածն ավելի է ընդգծվում նրանով, որ «Անլռելի զանգակատան» հատվածը անգիրների ցանկի ամենից ծավալուն եւ դժվար նյութերից է: Եվ 35 40 անգիր անթերի սովորած, «Գարուն էր: Չեկած ամառ» 26 տողանոց հատվածը փայլուն իմացող դիմորդը կարող է շփոթել իրարից հեռու գտնվող, բնագրային խաթարման ենթարկված տողերի հաջորդականությունը եւ զրկվել միավորից:

Առաջադրանքի բոլորի պատասխանները պետք է համարվեն ճիշտ:

**46**. Էապես սխալ առաջադրանք է: Ուղեցույցը սահմանում է. «Հայ գրականության փաստական նյութի իմացությունը ստուգվում է հիմնականում Ա մակարդակում ներկայացված առաջադրանքներով, իսկ դիմորդի վերլուծական կարողությունները՝ գերազանցապես Բ մակարդակում ստեղծագործության գաղափարական - բովանդակային կամ կառուցվածքային եւ գեղարվեստական յուրահատկությունների վերաբերյալ առաջադրանքներով» (էջ 10):

Ա 46-ը վերաբերում է գրական ժանրերին, զուտ վերլուծական հարց է եւ պետք է լիներ Բ մակարդակում: Այսինքն՝ կոպտորեն խախտված է թեստի կառուցվածքը:

Առկա են նաեւ մասնագիտական եւ լեզվական կոպիտ սխալներ: Սխալ է տրված **բալլադի** բնորոշումը: Դասագիրքը տալիս է հետեւյալ բնորոշումը.

«Բալլադը քնարաէպիկական տեսակ է, որի մեջ գործողությանը եւ սյուժեին հյուսվում են հեղինակի քնարական ապրումները»:

Քննական թեստը աղավաղել է այսպես. «**Ժողովրդական լեգենդի**, **ավանդավեպի չափածո մշակում է**, որտեղ սյուժեին միահյուսվում են հեղինակի քնարական ապրումները»: Այս սահմանման առաջին կեսը սխալ է. դա **լեգենդի,** ոչ թե բալլադի բնորոշումն է:

Սխալ է նաեւ քնարական պոեմի բնորոշումը: Դասագրքում այսպես է. «**Քնարական պոեմը** կարող է ունենալ ներքին կոնֆլիկտ, արտացոլել որոշ դեպքեր ու իրադարձություններ, բայց այնտեղ գործում է հեղինակը կամ նրա ընտրած մեկ հերոսը»:

Իբրեւ թե նույն միտքը թեստը տալիս է աչքի ծակող շարադասական սխալներով. «**Չափածո մեծ ծավալի** ստեղծագործություն է, որտեղ գործում է հեղինակը կամ **որեւէ մեկ հերոս**, իսկ կոնֆլիկտը ոչ թե արտաքին է, այլ ներքին»:

Դասագրքից դիտավորյալ շեղվելու միտումը դիմորդին միտումնավոր շփոթեցնող սխալի է վերածվել պատմվածքի ժանրային բնորոշման մեջ. «պատկերվում է մեկ դեպք կամ մեկ իրադարձություն»: Տպավորություն է ստեղծվում, որ դեպքն ու իրադարձությունը տարբեր բաներ են:

Մինչդեռ իններորդ դասարանի գրականության դասագրքում հստակորեն ասվում է, որ պատմվածքի մեջ պատկերվում է **«միայն մեկ իրադարձություն, մեկ դեպք»** (Հ. Բախչինյան, Ս. Սարինյան, Հ. Թամրազյան, Հայ գրականություն, 9-րդ դաս., 2006 թ., էջ 132. վերոհիշյալ բոլոր դասագրքային հատվածներն այս գրքից են):

Ա 46 առաջադրանքի 4 ժանրերից երեքի բնորոշումները սխալ են:

Այսինքն՝ առաջադրանքը ճիշտ պատասխան չունի: Բոլոր պատասխանները պետք է համարվեն ճիշտ:

## Բ մակարդակ

**56**. Այս առաջադրանքում ընդգրկված համանուն բառերը հնացած են, գրքային (հազվադեպ հանդիպող) ու նեղ մասնագիտական եւ դրանով իսկ հակասում են Ուղեցույցի հիմնական պահանջներից մեկին: Էդ. Աղայանի բացատրական բառարանը **խորդ**-ը նշում է որպես հնացած բառ՝ եւ՛ «կռունկ թռչուն», եւ՛ «խութ» իմաստներով: Նույն տեղում **թնջուկը** նշվում է որպես «հովանոցավոր սունկերի կարգին պատկանող **սունկ**», իսկ քննական թեստում՝ որպես «հովանոցավորների ընտանիքին պատկանող **բույս**»:

Այսինքն՝ տրվել է սխալ բացատրություն: Նույն բառը Ե. Գեւորգյանի համանունների բառարանում դրված է բսբ. նշումով (այսինքն՝ նեղ մասնագիտական բառ է) եւ բացատրված իբրեւ «կեչասունկ»: Կան նաեւ անորոշ, ապակողմնորոշող բացատրություններ:

Օրինակ **թնջուկ** համանունը Աղայանի բառարանում բացատրված է իբրեւ «իրար խառնված, խճճված, դժվար բաժանելի թել» կամ «խճճված մազեր», իսկ քննական թեստում բառերի բացատրությունն է «խճճված, խառը **ինչ-որ բան**»:

Ոչ գործածական, բարբառային, հնացած, նեղ մասնագիտական բառերի ընդգրկմամբ եւ դրանք սխալ բացատրություններով Բ 56ը խոտան առաջադրանք է, որի բոլոր պատասխանները պետք է համարվեն ճիշտ:

**63**. Թեստի հեղինակները բառերի ձեւաբանական վերլուծության սխալ են տեսնում միայն 3-րդ շարքում, որտեղ **այնտեղ** ցուցական դերանունը նշված է որպես տեղի մակբայ:

Բայց սխալ կա, այն էլ երկու, նաեւ 1-ին շարքում:

«- **Դե՛,** սիրո՛ւն աստղիկներ, երկնքի՛ ճրագներ, հիմա գնացե՛ք, **գիշե՛րը** եկեք» նախադասության մեջ թեստը դե՛ -ն համարում է ձայնարկություն: Դա կոպիտ սխալ է. **դե՛** -ն վերաբերական է արդեն իսկ դպրոցական դասագրքով (Ֆ. Խլղաթյան, Հայոց լեզու, 6-րդ դաս., Ե. 1999, էջ 133), իսկ **գիշերը** բառը տվյալ կիրառությամբ ոչ թե հասարակ գոյական է, ինչպես նշում է թեստը, այլ **մակբայ:**

«ԳԻՇԵՐ 5. մկ. գիշերը, գիշերները, գիշեր ժամանակ, գիշերվա ընթացքում» (Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1-ին, Ե. 1976, էջ 238):

Այսպիսով՝ Բ 63-ի առնվազն եւս մեկ պատասխան ճիշտ է:

**78**. Առաջադրանքը ստուգում է փաստական նյութի իմացությունը, որովհետեւ վերաբերում է հայ գրողների ասույթներին: Հետեւաբար այն կարող էր ընդգրկվել միայն Ա մակարդակում:

Առկա են նաեւ դիմորդին շեղող սխալներ: Մեծարենցից քաղված հատվածում **Արվեստին** բառը դարձել է **Արվեստի,** Բակունցից մեջբերվածում **պիտի** հասկանաս-ը՝ **պետք է** հասկանաս:

Խախտվել է թեստի՝ Ուղեցույցով որոշված կառուցվածքը (էջ 10), եւ բոլոր պատասխանները պետք է համարվեն ճիշտ:

Եթե վերը նշված սխալները, դպրոցական ծրագրերից եւ Ուղեցույցից շեղումները կարող են համարվել թույլատրելի, ուրեմն «Հայոց լեզու եւ գրականություն» առարկայից միասնական քննությունները կայացած են եւ արդյունքները վերանայման ենթակա չեն, իսկ եթե ո՞չ: Եվ սա դեռ բոլորը չէ:

ՍԵՐԺ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

---

ՃԱ՞Տ ԲԱՆ Է ՊԵՏՔ

# Օտարալեզու դպրոցների հարցը եւ հակառուսականությունը

**Օտարալեզու դպրոցների հարցի քննարկումը վերջին շաբաթների ընթացքում դարձել է մեր հանրության մի մասի հետաքրքրության հիմնական թեման, ակտիվացրել է շատերին եւ տարբեր հարցազրույցների ու կարծիքների պատճառ դարձել: Սակայն կրթության եւ գիտության նախարարության նախաձեռնության սկսված քննարկումները շատ սահուն կերպով ձեռք են բերել ընդգծված հակառուսական երանգներ: Որոշ կայքէջեր ուղղակի ողողված են հայտարարություններով եւ հարցազրույցներով, որտեղ հեղինակները «100 % ճշտությամբ» պնդում են, որ այս նախաձեռնության հետեւում կանգնած է պաշտոնական Մոսկվան, եւ իբր այնտեղից ամեն օր զանգահարում են Երեւան եւ պահանջում օտարալեզու դպրոցներ մտցնել Հայաստանում: Թե այս ամենը ռուսների ինչին է պետք, ոչ մի «մեկնաբան» չի փորձում բացատրել, չնայած տարրական տրամաբանությունը հուշում է, որ եթե, Աստված չանի, այս օրենքն ընդունվի, հայ մեծահարուստները կնախընտրեն իրենց երեխաներին ոչ թե ռուսական, այլ անգլիական դպրոցներ ուղարկել, այսինքն՝ գերիշխողը հենց անգլիալեզու դպրոցները կլինեն: Հետեւաբար, հզոր տրամաբանությամբ զինված ու հակառուսականություն քարոզող կայքէջերը ի՞նչ տրամաբանությամբ են այս ամենում ռուսական «հետք» փնտրում՝ անհասկանալի է: Տվյալ դեպքում, հավանաբար, տրամաբանական կլիներ խոսել անգլիական, ամերիկյան կամ անգլիալեզու մեկ այլ պետության, ասենք, Հնդկաստանի «հետքի» մասին, այլ ոչ ռուսականի: Սակայն հասկանալի է, որ խնդիրը օտարալեզու դպրոցների տխմար օրենքի քննարկումը չէ, այլ՝ հակառուսական տրամադրություններ քարոզելու մոլուցքը, ինչին ժամանակ առ ժամանակ, տարբեր կենտրոնների ֆինանսավորմամբ, լծվում են որոշ կայքէջեր: Իսկ դրա համար օգտագործվում է ամեն առիթ եւ առանց որեւէ էական բացատրության այն կապում «դավադիր» ռուսների հետ, որոնք ցանկանում են գրավել Հայաստանը, եւ սկսվում է հակաքարոզը:**

**Նման քարոզի վտանգն այն է, որ փորձ է արվում խնդիրը շեղել իրական պրոբլեմից, որ օտարալեզու դպրոցների ներմուծման դրդապատճառը Հայաստանում տարիներ շարունակ եվրոպական ծրագրերի օրինակով եւ ֆինանսավորմամբ տարվող կրթական «բարեփոխումների» գործընթացն է, որն արդեն այսօր կարող ենք փաստել, ավարտվել է լիակատար ձախողմամբ: Միջնակարգ կրթության նախկին համակարգը ոչնչացված է, իսկ նորը չի գործում: Հետեւաբար իրավիճակը փրկելու համար կրթության պատասխանատուները հղացել են «հանճարեղ» միտք՝ թույլ տալ օտարալեզու դպրոցներ բացել, ինչը ոչ միայն հարցի լուծում չէ, այլ էլ ավելի կխորացնի սոցիալական անդունդը աղքատների եւ հարուստների միջեւ, քանի որ այդ դպրոցները կլինեն միայն վերջիններիս մենաշնորհը եւ էլ ավելի կթուլացնեն հայկական դպրոցը:**

**Այսօր արդեն բարձրաձայն պետք է փաստենք այն իրողությունը, որ հանրակրթական դպրոցի բարեփոխումները, ինչով ակտիվորեն վերջին տարիներին զբաղվում էին կրթության եւ գիտության մի շարք նախարարներ, լիովին ձախողվել են, մենք հինը կորցրել ենք, իսկ նորը չենք ստեղծել ու հերթական անգամ հարցը լուծելու փոխարեն ապավինում ենք դրսին եւ հենց դրսում էլ փորձում փնտրել մեր խնդիրների մեղավորին:**

ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ
Արմենական-ՌԱ կուսակցության փոխնախագահ

# «Յունիբանկ»-ի բաժնետեր Գեորգի Պիսկովը դարձել է «Ֆինանսական Օլիմպ 2009»-ի մրցանակակիր

**Ռուսաստանյան «Յունիաստրում բանկ»-ի տնօրենների խորհրդի նախագահ, «Յունիբանկ»-ի խորհրդի անդամ եւ բաժնետեր Գեորգի Պիսկովը պարգեւատրվել է ռուսաստանյան «Ֆինանսական Օլիմպ 2009» մրցանակով: Գեորգի Պիսկովին պատվոգիր է հանձնվել Ռուսաստանի Դաշնության բանկային ակտիվների ապահովագրման համակարգի մշակման աշխատանքներում ունեցած ավանդի համար:**

**«Ֆինանսական Օլիմպ»-ը ամենահեղինակավոր մրցանակներից մեկն է, որը ստեղծվել է ֆինանսական ինստիտուտների ներդրումային գրավչության եւ շուկայի թափանցիկության բարձրացմանը նպաստելու համար: «Ֆինանսական Օլիմպ» մրցանակը շնորհվում է ինչպես լավագույն ընկերություններին, այնպես էլ ֆինանսական ոլորտի անհատ ներկայացուցիչներին:**

AZG NEW PDF.qxd 10/06/2010 21:55 Page 1



# Հետահայաց՝ երեքի ցուցահանդեսին

Գեղանկարչական ներկայիս իրողությունների, ցուցահանդեսային ներկայացումների մեջ լինում են եւ ոչ հազվադեպ այնպիսիք, որոնց տոնականությունը տրամադրություն ստեղծում է տեւական ժամանակների համար: Դա հիշողության մեջ արտատպված գունային հետքի կամ երազի է վերածվում հետո: Այդպիսիներից էր ժամանակակից արվեստի թանգարանի՝ 60-ականների ամենացայտուն արվեստագետներից երեքի՝ Ռոբերտ Էլիբեկյանի, Էդվարդ Խառազյանի եւ Արա Շիրազի միացյալ ցուցահանդեսը (ապրիլի 16-ից մայիսի 16-ը), ուր այցելեցի երկու անգամ, բացման՝ դիտելիության առումով դժվար (շատ էր մարդաշատ) առաջին եւ վերջին օրերին, երբ սրահների գունային լռության ունկնդիրն էի գրեթե մենակ: (Թանգարանի նորակառույց մասնաշենքի դռների առաջ նստած էր Ռոբերտ Էլիբեկյանը, ինձ հետաքրքիր էր նկարչի գործերը նայել՝ իմանալով, որ հեղինակը մի քանի քայլ է հեռու, բայց հաղորդակցվել կամ զրուցել ուզենալ լուռ, առանց խոսքի, նկարների միջոցով միայն, փորձել հասկանալ առանց միջամտության):

Նոթատետրի գրառումները պահի մեջ երկխոսություն սկսած նկարներին են վերաբերում, միայն խորագրեր են, որոնք հետագայում օգնում են՝ գտնելու իրենց «տերերի» գույներն ու ձեւերը. դրանք յուրատեսակ հուշարարներ են, որ պատմում են նոր տարածությունների ու աշխարհների մասին, որոնք կտավի սահմանափակ տարածքից ներս ստեղծում են զարմանալիորեն անսահման վիճակներ՝ մտային ու հոգեւոր:



Ռ. Էլիբեկյան «Կիսադեմ»

Թատերաբեմը **Ռոբերտ Էլիբեկյանի** արվեստային գործողությունների նախասիրած վայրն է: Այս պայմանական աշխարհում նրա գունային պատկերը ձեռք է բերում արտիստիկ կեցվածք՝ հանդիսավոր գեղեցկությունների մեջ ընկողմանած, գոյության սահմանների խիստ ենթադրյալությամբ: Եթե իրական բեմը կամ թատրոնը կյանքի քողազերծման հանդիսավայրն է՝ պայմանականություններ բացահայտելու, ապա Էլիբեկյանի թատերայնացված մտածողության գեղանկարչական լեզուն ընդգծում է այդ նույն կյանքի երկվությունը՝ մի կողմից փորձելով պահպանել դրա գեղագիտությունը, մյուս կողմից՝ կտավի ետնախորքի գունային դրամատիզմը ստեղծում է հակասություն՝ թեւավոր երազի ու մերկ իրականության միջեւ: Նրա նկարներում թռիչքը մտային վիճակ է, բոլոր կերպարները, պատկերները ասես մաքրագործվում են ճախրանքի՝ բարձունքին ձգտելու ճանապարհին: Նրա կանայք եւ կան եւ չկան, նրանց մարմնական ձեւերը եթերային տպավորություն են թողնում, ինչ-որ տեղ բեմական կեցվածքով, սպասման առեղծվածային լռությամբ, որն ասես պարուրում, շղարշում է իրենց: Ռ. Էլիբեկյանի գույնը նուրբ չէ բոլորովին, այն շատ հարուստ է, նույնիսկ խիտ՝ երբեմն, բայց ներքին լուսավորությունն «ամենածանր» գույներն անգամ («Միստերիա», «Ողբ-1», «Ողբ-2», «Արշիլ Գորկու հիշատակին») դարձնում է կտավը տարածական, բաց, ներընկալելի, խորքում՝ երաժշտական. այդ հարուստ գունանվագը միջնադարյան պալատական հնչողություն է տարածում: Միֆական տեսիլքների, անմարմին թռչող պատկերների միջոցով նկարները անորսալի, եթերային հատկանիշ են ձեռք բերում:

Ցուցասրահի, եթե չեմ սխալվում, երրորդ հատվածի ձախակողմյան պատին լավագույն նկարներն էին՝ կողք կողքի՝ գունային, նաեւ իմաստային փոխլրացնող դրամատիկ կոմպոզիցիա ստեղծած: Նկարների էներգետիկ կենտրոնում կանաչն էր՝ միստիկ-շղարշային զգացողություններով, մարդու երկվության՝ աշխարհիկ կեցության եւ հոգեւոր գոյության դրամատիկ ելեւէջներով. Էլիբեկյանի այս շարքը («Ողբերգություն», «Վերք», «Տեսիլք», «Միստերիա») մոգական զորությամբ բացում է աչքը դեպի այլ աշխարհ, որը նկարագրելի չէ. արվեստագետը հուշարար է, միջնորդ-կապ անցողիկի եւ անանցի միջեւ: Ռ. Էլիբեկյանի գունային դրաման, ձեւերի առեղծվածայնությունը, թատերային խաղը մարդու կարոտն է՝ կորուսյալ, ինչ-որ ժամանակ, անանուն մի տեղ թողած, որոնելի աշխարհի հանդեպ: Էլիբեկյանի նկարչությանը բնորոշ բարձր տոնայնությունները, գունային հանդիսավորությունն ու թատերայնությունը այս ցուցահանդեսում, այդուհանդերձ, կարելի է ասել ետին պլան էին մղվել, գլխավոր մոտիվը կամ ներքին իշխող տրամադրությունը ոչ այնքան հանդիսավորությունը, որքան հոգեվիճակային արտահայտություններն էին՝ տխրությունից, դրամատիզմից մինչեւ ողբերգություն, սակայն թեթեւ, լուսավոր նվագներով: Այդ ողբերգությունը մռայլ, առավել եւս հուսահատեցնող չէ, քանի որ նկարչի գեղագիտական ու մարդկային հայացքը լույսի հետեւորդն է ու նրա զգայուն թարգմանը:

**Էդվարդ Խառազյանը** նույն 60-ականների սերնդից՝ նկարչական ինքնատիպ դրսեւորումներ ունի: Նրա արվեստը առաջին, սովորական ընկալման համար դյուրամարս չէ: Ինքը աշխատում է նվազագույնի հասցնել արտաքին աշխարհի պատկերային համակարգը՝ ստեղծելով նշանների իր տարածքը գունային պարզ թվացող հարթությունների վրա՝ խորամոյն իր մտքերի, ներքին կյանքի մեջ: Եթե փորձենք մի պահ վերանալ աշխարհի ձեւերից՝ թափառելով ներանձնականի խորքերում, կհայտնաբերենք մեզ անկշռելիության վիճակում, ուր ծանոթ առարկաները կերպափոխվում են զգացողությունների, ուր նյութը տրանսֆորմացվում, նորանում, դառնում է գույն, հնչյուն, նվաղում: Կտավին հանձնված գույնի մաքուր վիճակները եւ «ժլատ» պատկերները նույնքան թափանցիկ, անմարմին են՝ զգուշավորությամբ, թվացյալ դատարկ տարածությամբ: Էդ. Խառազյանի ան-



Էդ. Խառազյան «Պատուհան»

նյութականությունը քնարականությամբ է շնչում, ամենագեղեցիկը այն հստակությունն է, որ իր մեջ հայտնաբերում է նկարիչը՝ իրերի աշխարհից վերացարկվելիս: Աշխարհը ակնարկների մեջ է բացահայտվում-երեւում՝ որպես պատառիկներ անցյալից, կետագծեր՝ ներկայի: Նկարի մակերեսների գունային մենախոսությունները՝ ապագայի մեջ են՝ լողացող հիշողության ծվեններով («Ռիթմ», «Պոռթկում», «Պատուհան», «Տարածության մոդուլ», «Շարժում»): Նա հաճախ է դուրս հոսում ժամանակից, մոտենում ձգողականությունից ազատագրվելու վիճակին՝ «Անկշռելիության»՝ բաց մոխրագույն, նուրբ մակերեսներին: Էդվարդ Խառազյանի վերջին շրջանի արվեստն ասես ընդհանրացնում է անցած ճանապարհն ու ապրած ժամանակը, որոնցից արտաբեկվող պատկերները տարերային կամ պատահական չեն. դրանք իմաստային, հոգեւոր կենսագրության լիցքեր են կրում, գույնի հանդարտ հարթություններին ոչ միայն առանձնապես գեղեցիկ՝ անսպասելի վառ առկայծումներով, այլեւ իրենց շուրջը առաջ բերած զգացողությունների, խոհերի ծփանքներով:

**Արա Շիրազը** ներկայանում է բազմապլանային եւ բազմաձեւ՝ քանդակի հղացման դասական սկզբունքներով եւ նորարական ձեւերի զուգակցումներով: Նյութը մեկնաբանված է տարբեր շերտերով՝ համապատասխան իմաստային հղացքին: Դասական մոտեցումներում օգտագործվում է ժամանակի մեջ դիմադրող նյութը. նա ամուր է, կայուն: Շիրազի քանդակները էքսպոզիցիայի գեղանկարչական միջավայրում դիտվում են օրգանապես փոխկապակցված, դրանք ձուլվում, ներդաշնակվում են ընդհանուրի ոգուն: Անկասկած, դիմաքանդակները տիրապետող են տպավորության առումով: Մոդեռնիստական ոճով արված կոմպոզիցիաները թեմատիկ-իմաստային շեշտադրում ունեն. դրանք հիշողություններ են, մարդկային կյանքի, հոգեւոր ապրումի վերարտադրություններ, սիմվոլներ, նշաններ («Փլված մատուռ»): Հին իրերի մեջ նա նույնպես որոշակի վիճակ, ժամանակային խտացում, պատմության հետքեր է տեսնում («Ռելիեֆներ»): Շատ զգացմունքայնություն, թախիծ է ծվարած «Ռեքվիեմ Սիփանի հիշատակին» հորինվածքում:

Կարծր նյութի միջից Արա Շիրազը դուրս է կորզում նրա ոգին, վերածում երբեմն փխրուն, երբեմն երերացող, երբեմն էլ կարծր կերպարների:

Արդիական կամ վերացարկված ձեւերն ընդունված կարծրատիպերից ազատ են, ավելի գաղափարակիր, մտածողական հորինվածքներ: Սակայն Շիրազի քանդակային մտածողության ակնհայտ նվաճումը դիմաքանդակներն են՝ տվյալ անհատի ներքին դիմագծի բնորոշ կնիքը վրան, արտահայտիչ, ինչպես առանձին դետալների (ծխամորճ, գլխարկ, վզնոց եւ այլն), առավելաբար՝ խարակտերային ընդգծվածությամբ: Այդպիսին են Երվանդ Քոչարի, Սեթ Ռաշմաջյանի, Ռոբերտ Էլիբեկյանի, Էդվարդ Խառազյանի քանդակները, նաեւ՝ «Ինքնադիմաքանդակը»:

Այստեղ փակենք ցուցահանդեսի հիշողությունների էջը եւ անդրադառնանք կատալոգին՝ տպագրված այս նույն առիթով, որի երեք առանձին բաժինները ներկայացնում են Ռոբերտ Էլիբեկյանի, Արա Շիրազի եւ Էդվարդ Խառազյանի համառոտ կենսագրականներն ու ստեղծագործությունների գունավոր վերատպությունները (նկարների խորագրերը զետեղված են վերջում՝ յուրաքանչյուր անհրաժեշտության դեպքում վերաբացել տալով այդ էջերը):

Կատալոգը՝ հայերեն եւ անգլերեն զուգադիր տեքստերով, հրատարակվել է Մշակույթի նախարարության ֆինանսական աջակցությամբ, «Տիգրան Մեծ» տպագրատանը, համակարգող՝ Ռոբերտ Էլիբեկյան:



Արա Շիրազ «Սեթ Ռաշմաջյան»

60-ականներ հայ գեղագիտական մտահամակարգի, նոր արտահայտչաձեւերի, դրանց զարգացումների եւ այդ հայացքները կրող սերնդի գաղափարակից ու հոգեկից, նաեւ այդ զարգացումների անմիջական մասնակից-տեսաբանն էր **Պողոս Հայթայանը**, եւ այս կատալոգն ավելի է արժեւորվում արվեստաբանական այն հիանալի, ընդգրկուն, խորքային տեքստով, որով Պողոս Հայթայանը ներկայացնում է իրեն քաջածանոթ՝ թե մարդկային, թե ստեղծագործական շերտերով, այս երեք արվեստագետներին:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

# Նորայր Ադալյանի վիպակը սլովեներեն

Սլովենիայի «Բերի Գլոբալըն» հրատարակչությունը Անդրեյ Սաբաթի Շուստերի թարգմանությամբ լույս է ընծայել Ն. Ադալյանի «Տեսիլք» վիպակը՝ «Տառապանք եւ սեր» վերնագրով, որը «Տեսիլքի» օտարալեզու երրորդ տպագրությունն է: Թարգմանությունը կատարված է գերմաներեն հրատարակությունից (Ֆրանկֆուրտ, Գլարե, 2008 թ.): Առաջաբանի հեղինակ՝ Փաուլ Գայս: Սեպտեմբերին մայրաքաղաք Լյուբլյանայում, հայ-սլովենիական մշակութային կապերի շրջանակում տեղի կունենա գրքի շնորհանդեսը, որին կհրավիրվի եւ հեղինակը: Նա նաեւ հանդես կգա հայոց լեզվի ու գրականության մասին զեկուցումով:




# «Երեք սոպրանո» գալա-համերգ

**ՀՀ մշակույթի նախարարությունը եւ Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնը առաջին անգամ երաժշտասերների ունկնդրությանը ներկայացրեցին «Երեք սոպրանո» նախագծի գալա-համերգը, որին մասնակցում էին մեր օպերային թատրոնի մեներգչուհիներ Մագդա Մկրտչյանը, Մարինե Դեինյանը եւ Նունե Բաղայանը:**

**Նախարարության պատվերով կոմպոզիտոր Ստեփան Շաքարյանը մշակել է հայ եւ արեւմտաեվրոպական կոմպոզիտորների մոտ 20 ստեղծագործություններ սիմֆոնիկ նվագախմբի ու 3 սոպրանոների համար: Անդրանիկ գալա-համերգը ընդունվեց խանդավառությամբ, երկարատեւ ծափերով:**



**Համերգի ընթացքում Ստեփան Շաքարյանի նոր սիմֆոնիկ մշակումները հրաշալի մատուցեցին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի սիմֆոնիկ նվագախումբը՝ դիրիժոր, ՀՀ վաստակավոր արտիստ Կարեն Դուրգարյանի գլխավորությամբ: Անկրկնելի համերգը դեռ երկար կմնա այն ըմբոշխնածների հիշողության մեջ:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

AZG NEW PDF.qxd 10/06/2010 22:23 Page 1



# Ֆուտբոլային տոնահանդեսը սկսվում է

Ուղիղ մեկ ամիս մարզասերների ուշադրության կենտրոնում կլինի Հարավաֆրիկյան Հանրապետությունը, որտեղ այսօր մեկնարկում է ֆուտբոլի աշխարհի 19-րդ առաջնությունը: Ավանդույթի համաձայն մրցաշարը կսկսվի առաջնության կազմակերպիչ երկրի հավաքականի մրցելույթով, որը Յոհանեսբուրգի «Սոկեր Սիթի» մարզադաշտում կհյուրընկալի Մեքսիկայի ընտրանուն: Խաղը կսկսվի Երեւանի ժամանակով 19-ին եւ կցուցադրվի Հայաստանի Հանրային հեռուստաալիքով:

Ի տարբերություն նախորդ առաջնությունների, ՀԱՀ-ում հանդես են գալու աշխարհի չեմպիոնի տիտղոսին արժանացած բոլոր 7 հավաքականները՝ Բրազիլիան (5 անգամ), Իտալիան (4), Գերմանիան (3), Ուրուգվայը (2), Արգենտինան (2), Անգլիան (1) եւ Ֆրանսիան (1): Միայն Բրազիլիայի հավաքականն է մասնակցել նախորդ բոլոր 18 առաջնություններին: Աշխարհի ներկայիս չեմպիոն իտալացիներն ու գերմանացիները 16 անգամ են վիճարկել աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Իտալացիները չեն մասնակցել 1930-ի եւ 1958-ի մրցաշարերին, գերմանացիները բացակայել են 1930-ին եւ 1950-ին անցկացված աշխարհի առաջնություններում: Արգենտինացիները մասնակցել են 14 մրցաշարի: Իսկ ահա ԿԺԴՀ-ի (1966-ին), Հոնդուրասի (1982), Նոր Զելանդիայի (1982), Հունաստանի (1994), Սլովենիայի (2002), Գանայի (2006) եւ Կոտ դ՛Իվուարի (2006) հավաքականներն առայժմ միայն մեկ անգամ են մասնակցել աշխարհի առաջնություններին: Միակ նորեկը Սլովակիայի հավաքականն է:

Այս առաջնության յուրահատկությունը նաեւ այն է, որ մրցաշարն առաջին անգամ անցկացվում է Աֆրիկայում: Բացառված չէ, որ հուլիսի 11-ին «ծնվի» աշխարհի 8-րդ չեմպիոնը: Իսկ մասնագետներն առայժմ բոլորից բարձր են գնահատում Եվրոպայի չեմպիոն Իսպանիայի հավաքականի չեմպիոն դառնալու հնարավորությունը: Ի դեպ, իսպանացիները նախորդ 12 առաջնություններում դեռեւս մրցանակակիր չեն դարձել: Եվրոպայից աշխարհի չեմպիոնի տիտղոսի հավակնորդներ են համարվում նաեւ Հոլանդիայի, Պորտուգալիայի, Իտալիայի եւ Անգլիայի հավաքականները: Պետք է անտեսել նաեւ Ֆրանսիայի եւ Գերմանիայի ընտրանիներին, որոնք սովորաբար հաջող են հանդես գալիս աշխարհի առաջնություններում: Ճիշտ է, պետք է հաշվի առնել մեկ հետաքրքրական փաստ. եվրոպական երկրների հավաքականներն Աշխարհի գավաթը նվաճել են միայն Եվրոպայում անցկացված մրցաշարերում: Ճիշտ է, մյուս կողմից Աֆրիկան ժամային գոտիների առումով ավելի հարմար է եվրոպացիների համար: Իսկ ահա եղանակային պայմանների առումով ՀԱՀ-ը հիշեցնում է Արգենտինան, որտեղ եւս ձմեռ է սկսվում:



Հարավային Ամերիկայի երկրներից չեմպիոնի տիտղոսի գլխավոր հավակնորդներն են Բրազիլիայի եւ Արգենտինայի հավաքականները: Հետաքրքրական է, որ 1970-ին 3-րդ անգամ չեմպիոն դառնալուց հետո բրազիլացիներին 24 տարի պահանջվեց հաջորդ չեմպիոնությունը գրանցելու համար: Նույնը վերաբերում է իտալացիներին (1982, 2006): Արգենտինան եւս 24 տարի չեմպիոն չի դարձել (2-րդ հաջողությանն արգենտինացիները հասել էին 1986-ին): Կհաջողվի՞ Դիեգո Մարադոնայի սաներին կրկնել բրազիլացիների եւ իտալացիների արդյունքը: Թվում է, թե այսօր Արգենտինայի հավաքականն ամենաուժեղ հարձակման գիծն ունի աշխարհի լավագույն ֆուտբոլիստ Լիոնել Մեսիի գլխավորությամբ: Սակայն մասնագետներից շատերն այն կարծիքին են, որ Մարադոնայի պատճառով Արգենտինան չեմպիոն չի հռչակվի: Այդ դեպքում համաշխարհային ֆուտբոլի երբեմնի «աստղը» ստիպված կլինի կատարել խոստումը եւ մերկ վազել Բուենոս Այրեսի խորհրդանիշ Օբելիսկի շուրջը: Մարադոնայի պես Բրազիլիայի հավաքականի գլխավոր մարզիչ Կառլոս Դունգան էլ մարզչական աշխատանքի մեծ փորձ չունի: Նա 1994-ին Բրազիլիայի հավաքականի ավագն էր, որը ՖԻՖԱ-ի նախագահից ստացավ Աշխարհի գավաթը: Թեեւ Դունգան հրաժարվել է Ռոնալդինյոյի եւ Ադրիանոյի ծառայություններից, սակայն մասնագետները նշում են, որ Բրազիլիայի հավաքականը երբեք այսքան կազմակերպված չի եղել: Բրազիլացիների հարձակման երկյակը հանձինս Լուիս Ֆաբիանոյի եւ Ռոբինյոյի, շատ տպավորիչ է:

Իհարկե, հաշվի առնելով կլիմայական պայմանները, մասնագետներից ոմանք ակնկալում են աֆրիկյան որեւէ հավաքականի հաջող ելույթը: Աֆրիկայի ուժեղագույն հավաքականը՝ Եգիպտոսը, աշխարհի առաջնությանը չի մասնակցում: Գանայի եւ Նիգերիայի հավաքականները զրկվել են իրենց առաջատարներից՝ Էսիենից եւ Միկելից, հարցականի տակ է կոտդ՛իվուարցի Դրոգբայի մասնակցությունը: Ամեն դեպքում հնարավոր է, որ աֆրիկյան հավաքականներից որեւէ մեկը կարողանա կրկնել 1990-ին Կամերունի եւ 2002-ին Սենեգալի ցույց տված արդյունքը՝ մտնելով քառորդ եզրափակիչ:

Եվ այսպես, այսօր 32 հավաքականները սկսում են մրցավեճն Աշխարհի գավաթի համար: Նախնական փուլում նրանք բաժանվել են 8 խմբի, որոնցում 1-ին եւ 2-րդ տեղերը զբաղեցրած հավաքականները կշարունակեն պայքարը 1/8 եզրափակիչում: Վճռորոշ հանդիպումը կկայանա հուլիսի 11-ին Յոհանեսբուրգի «Սոկեր Սիթի» մարզադաշտում: Իսկ ընդհանրապես առաջնության հանդիպումները տեղի կունենան ՀԱՀ-ի 9 քաղաքներում:

ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

# Հայ բռնցքամարտիկները եւս 2 մեդալ նվաճեցին

**Բռնցքամարտի Հայաստանի հավաքականը Մոսկվայում ընթացող Եվրոպայի առաջնությունից տուն կվերադառնա երեք մեդալով: Արթուր Խաչատրյանից հետո իրենց համար նվազագույնը բրոնզե մեդալ ապահովեցին նաեւ Հովհաննես Դանիելյանը (48 կգ) եւ Հրաչյա Ջավախյանը (64 կգ):**

**Եթե Ջավախյանից մրցանակակիր դառնալու համար պահանջվեց հաղթել անցկացրած 3 մենամարտում, ապա Հովհաննես Դանիելյանին բավարար էր մեկ հաղթանակը: Բանն այն է, որ մինչեւ 48 կգ քաշային կարգում Եվրոպայի առաջնությանը մասնակցում են ընդամենը 12 բռնցքամարտիկներ: Դանիելյանն իր բարձր վարկանիշի շնորհիվ պայքարը սկսեց քառորդ եզրափակիչից, որտեղ նրա մրցակիցն ուկրաինացի Դենիս Շկարուբոն էր: Համառ պայքարում անցած մենամարտում գրանցվեց 4-4 հաշիվ, իսկ մրցավարները նախապատվությունը տվեցին Դանիելյանին: Այսպես, 2008-ի Եվրոպայի չեմպիոնը մտավ կիսաեզրափակիչ, որտեղ մրցելու է ադրբեջանցի Էլվին Մամիշզադեի հետ: Վերջինս պայքարից դուրս մղեց ռուսաստանցի Դավիթ Հայրապետյանին (5-3): Կիսաեզրափակիչի մյուս զույգը կազմել են իռլանդացի Պատրիկ Բառնեսն ու իսպանացի Խոսե Լինարեսը:**

**Պեկինի օլիմպիադայի բրոնզե մեդալակիր Հրաչյա Ջավախյանը (64 կգ) պարտության մատնեց գերմանացի Դավիթ Մյուլլերին (5-3): Առաջին 2 ռաունդներից հետո հաշիվը հավասար էր (2-2): Վճռորոշ 3-րդ ռաունդում հայ բռնցքամարտիկը հաղթեց 3-1 հաշվով եւ իր համար ապահովեց բրոնզե մեդալը:**



**Կիսաեզրափակիչում Ջավախյանի մրցակիցը կլինի ուկրաինացի Ալեքսանդր Կլյուչկոն, որը 5-3 հաշվով պարտության մատնեց թուրք Օնուր Սիպալին: Եզրափակիչի մյուս ուղեգրի համար կպայքարեն ռուսաստանցի Ալեքսանդր Սոլյաննիկովն ու Հունգարիան ներկայացնող Գյուլա Կատեն:**

**Այսպիսով, բացի հայաստանցի 3 բռնցքամարտիկներից, եզրափակիչի ուղեգրի համար պայքարում է միայն մեկ հայազգի մարզիկ՝ ռուսաստանցի Միշա Ալոյանը (51 կգ), որի մրցակիցն իտալացի Վինչենցո Պիկարդին է: Կիսաեզրափակիչի ուղեգիր չհաջողվեց նվաճել Բելառուսը ներկայացնող Վազգեն Սաֆարյանցին, որը 1-8 հաշվով պարտվեց գերմանացի Էնգեն Բուրհարդին:**

# Առավել հաջող էր Հարությունյանի ելույթը

**Հնդկաստանի Մումբայ քաղաքում ավարտվեց շախմատի միջազգային մրցաշարը, որին մասնակցում էին 351 շախմատիստներ: Հայաստանի երկու ներկայացուցիչներից առավել հաջող հանդես եկավ Գեւորգ Հարությունյանը, որը 11 հնարավորից վաստակելով 7,5 միավոր, զբաղեցրեց 22-րդ տեղը: 2460 վարկանիշ ունեցող հայ գրոսմայստերը վերջին 2 տուրերում իր օգտին մեկ միավոր գրանցեց՝ հաղթելով արգենտինացի Պաբլո Լաֆուենտեին, պարտվելով ռուսաստանցի Դմիտրի Բոչարովին:**

**Հրայր Սիմոնյանը 6,5 միավորով տեղ զբաղեցրեց 94-րդ հորիզոնականում: Նա եւս վերջնագծում մեկ միավոր վաստակեց՝ հաղթելով Չանդրասիխ Մաջումդարին, զիջելով Շահ Սագարին:**

**Մրցաշարի հաղթող ճանաչվեց ռուսաստանցի Դմիտրի Կոկարեւը՝ վաստակելով 9 միավոր: 10-րդ տուրում նա հաշտություն կնքեց իր գլխավոր հակառակորդներից մեկի՝ Ալեքսեյ Դրեեւի հետ, իսկ ավարտական տուրում միավորը կիսեց Թոմաս Լութերի հետ մրցավեճում: 6 շախմատիստ՝ ռուսաստանցիներ Պավել Մալետինը, Ալեքսեյ Դրեեւը, Ալեքսեյ Ալեքսանդրովը, Դմիտրի Բոչարովը, Ալեքսանդր Ֆիեռը եւ Թոմաս Լութերը հաղթողից հետ մնացին կես միավորով:**

# Աշխարհի առաջնության խաղացանկը

SOUTH AFRICA 2010 FIFA WORLD CUP

| *A խումբ* | *B խումբ* | *C խումբ* | *D խումբ* |
|---|---|---|---|
| ՀԱՀ | Արգենտինա | Անգլիա | Գերմանիա |
| **Մեքսիկա** | **Նիգերիա** | **ԱՄՆ** | **Ավստրալիա** |
| Ուրուգվայ | Հար. Կորեա | Ալժիր | Սերբիա |
| **Ֆրանսիա** | **Հունաստան** | **Սլովենիա** | **Գանա** |

| *E խումբ* | *F խումբ* | *G խումբ* | *H խումբ* |
|---|---|---|---|
| Հոլանդիա | Իտալիա | Բրազիլիա | Իսպանիա |
| **Դանիա** | **Պարագվայ** | **ԿԺԴՀ** | **Շվեյցարիա** |
| Ճապոնիա | Նոր Զելանդիա | Կոտ դ՛ Իվուար | Հոնդուրաս |
| **Կամերուն** | **Սլովակիա** | **Պորտուգալիա** | **Չիլի** |

| | |
|---|---|
| **11 հունիսի** | |
| ՀԱՀ-Մեքսիկա | 19:00 |
| Ուրուգվայ-Ֆրանսիա | 22:30 |
| **12 հունիսի** | |
| Արգենտինա-Նիգերիա | 19:00 |
| Հար. Կորեա-Հունաստան | 16:30 |
| Անգլիա-ԱՄՆ | 23:30 |
| **13 հունիսի** | |
| Ալժիր-Սլովենիա | 16:30 |
| Գերմանիա-Ավստրալիա | 23:30 |
| Սերբիա-Գանա | 21:00 |
| **14 հունիսի** | |
| Հոլանդիա-Դանիա | 16:30 |
| Ճապոնիա-Կամերուն | 19:00 |
| Իտալիա-Պարագվայ | 23:30 |
| **15 հունիսի** | |
| Նոր Զելանդիա-Սլովակիա | 16:30 |
| Կոտ դ՛ Իվուար-Պորտուգալիա | 19:00 |
| Բրազիլիա-ԿԺԴՀ | 23:30 |
| **16 հունիսի** | |
| Հոնդուրաս-Չիլի | 16:30 |
| Իսպանիա-Շվեյցարիա | 19:00 |
| ՀԱՀ-Ուրուգվայ | 23:30 |
| **17 հունիսի** | |
| Ֆրանսիա-Մեքսիկա | 23:30 |
| Հունաստան-Նիգերիա | 19:00 |
| Արգենտինա-Հար. Կորեա | 16:30 |
| **18 հունիսի** | |
| Գերմանիա-Սերբիա | 16:30 |
| Սլովենիա-ԱՄՆ | 19:00 |
| Անգլիա-Ալժիր | 23:30 |
| **19 հունիսի** | |
| Գանա-Ավստրալիա | 19:00 |
| Հոլանդիա-Ճապոնիա | 16:30 |
| Կամերուն-Դանիա | 23:30 |
| **20 հունիսի** | |
| Սլովակիա-Պարագվայ | 16:30 |
| Իտալիա-Նոր Զելանդիա | 19:00 |
| Բրազիլիա-Կոտ դ՛ Իվուար | 23:30 |
| **21 հունիսի** | |
| Պորտուգալիա-ԿԺԴՀ | 16:30 |
| Չիլի-Շվեյցարիա | 19:00 |
| Իսպանիա-Հոնդուրաս | 23:30 |
| **22 հունիսի** | |
| Մեքսիկա-Ուրուգվայ | 19:00 |
| Ֆրանսիա-ՀԱՀ | 19:00 |
| Նիգերիա-Հար. Կորեա | 23:30 |
| Հունաստան-Արգենտինա | 23:30 |
| **23 հունիսի** | |
| Սլովենիա-Անգլիա | 19:00 |
| ԱՄՆ-Ալժիր | 19:00 |
| Գանա-Գերմանիա | 23:30 |
| Ավստրալիա-Սերբիա | 23:30 |
| **24 հունիսի** | |
| Սլովակիա-Իտալիա | 19:00 |
| Պարագվայ-Նոր Զելանդիա | 19:00 |
| Դանիա-Ճապոնիա | 23:30 |
| Կամերուն-Հոլանդիա | 23:30 |
| **25 հունիսի** | |
| Պորտուգալիա-Բրազիլիա | 19:00 |
| ԿԺԴՀ-Կոտ դ՛ Իվուար | 19:00 |
| Չիլի-Իսպանիա | 23:30 |
| Շվեյցարիա-Հոնդուրաս | 23:30 |
| 1/8 եզրափակիչ | |
| **26 հունիսի** | |
| 1. 1A-2B | 19:00 |
| 2. 1C-2D | 23:30 |
| **27 հունիսի** | |
| 3. 1D-2C | 19:00 |
| 4. 1B-2A | 23:30 |
| **28 հունիսի** | |
| 5. 1E-2F | 19:00 |
| 6. 1G-2H | 23:30 |
| **29 հունիսի** | |
| 7. 1F-2E | 19:00 |
| 8. 1H-2G | 23:30 |
| **1/4 եզրափակիչ** | |
| **2 հուլիսի** | |
| A. 5-6-րդ զույգերի հաղթ. | 19:00 |
| B. 1- 2-րդ զույգերի հաղթ. | 23:30 |
| **3 հուլիսի** | |
| C. 4-3-րդ զույգերի հաղթ. | 19:00 |
| D. 7-8-րդ զույգերի հաղթ. | 23:30 |
| **Կիսաեզրափակիչ** | |
| **6 հուլիսի** | |
| B եւ A զույգերի հաղթողներ | 23:30 |
| **7 հուլիսի** | |
| C եւ D զույգերի հաղթողներ | 23:30 |
| **10 հուլիսի** | |
| 3-րդ տեղի համար | 23:30 |
| **11 հուլիսի** | |
| Եզրափակիչ | 23:30 |

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Արցախի խորհրդարանը մեկնարկեց իր հնգամյա օրենսդրական գործունեությունը

Երեկ ԼՂՀ նորընտիր խորհրդարանը գումարեց իր անդրանիկ նիստը:

Նոր խորհրդարանին բեղմնավոր գործունեություն մաղթելով՝ ԼՂՀ նախագահ **Բակո Սահակյանը** միաժամանակ հույս հայտնեց, որ Ազգային ժողովում ընդգրկված քաղաքական ուժերի միջեւ կլինի լիակատար փոխըմբռնում ու արդյունավետ համագործակցություն:

Պատգամավորներին օրհնանքի խոսք հղեց Հայ առաքելական եկեղեցու Արցախյան թեմի առաջնորդ **Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը**:

Երդման արարողությունից հետո պատգամավորները ձեռնամուխ եղան խորհրդարանի կառույցների ձեւավորմանը: ԱԺ նախագահի պաշտոնի համար առաջարկվեց Աշոտ Ղուլյանի թեկնածությունը: Տեղի ունեցավ փակ քվեարկություն. վերջինիս կողմ քվեարկեց 33 պատգամավորներից 29: Երեք հոգի քվեարկել էին դեմ, մեկ ընտրաթերթիկ ճանաչվել էր անվավեր:

ԱԺ փոխխոսնակի պաշտոնի համար առաջարկվեց Արթուր Թովմասյանի թեկնածությունը, որն ընտրվեց 31 կողմ եւ 2 դեմ ձայներով:

Նկատենք, որ նրանք երկուսն էլ խորհրդարանի խոսնակի փորձ ունեն. Աշոտ Ղուլյանը Ազգային ժողովը ղեկավարել էր նախորդ գումարման խորհրդարանի ամբողջ գործունեության ընթացքում, իսկ Արթուր Թովմասյանը ԱԺ նախագահ է եղել 1996-97 թվականներին:

Ձեւավորվեցին նաեւ ԱԺ մշտական գործող հանձնաժողովները, որոնք արդեն 7-ն են՝ նախկին 6-ի փոխարեն: Ընդ որում, հանձնաժողովների նախագահների ու նրանց տեղակալների աշխատավարձերի միջեւ տարբերություն արդեն չի լինի, որովհետեւ փոփոխված օրենքով դրանք հավասարեցված են:

Նոր խորհրդարանում քաղաքական ուժերը դարձյալ երեքն են՝ «Ազատ հայրենիք», Արցախի ժողովրդավարական եւ Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունները: Այս ուժերով կազմավորված խմբակցություններից բացի, ստեղծվել է նաեւ երեք հոգուց բաղկացած «Արցախաշուն» պատգամավորական խումբ անկախ պատգամավորների թվից:

Նիստը ընդմիջվել է մինչեւ հունիսի 30-ը. այդ օրը խորհրդարանը կքննարկի կառավարության ծրագրին հավանություն տալու հարցը:

ԱԺ անդրանիկ նիստին հրավիրված էին նաեւ Ֆրանսիայի խորհրդարանի մի խումբ պատգամավորներ, որոնք այս օրերին ճանաչողական այցով գտնվում են Արցախում:

**ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**
**Ստեփանակերտ**

## ԹԲԻԼԻՍԻ

# Սաակաշվիլու՝ վարչապետ դառնալու մեխանիզմը

**Վրաստան-Ռուսաստան հարաբերությունները չգոյության այնպիսի մի վիճակում են, երբ միմյանց առնչվող հայտարարությունները ավելի հաճախ թշնամական բնույթ են կրում, քան որեւէ կոնկրետ երեւույթի վերաբերում: Սակայն երբ հարցը վերաբերում է քաղաքականությանը երկրի ներսում ու դրանում հատուկ մեխանիզմների կիրառմանը, պարզվում է, որ ռուսական, թե վրացական՝ առանձնակի տարբերություն չկա:**

**Տվյալ դեպքում խոսքը այն փոխատեղման մասին է, որ իրականացվեց Ռուսաստանում երկրի նախագահի՝ վարչապետի աթոռին հայտնվելու ձեւով: Իշխանական աթոռների, բայց ոչ իշխանության փոխատեղման այս մոդելը կարող է եւ ամենայն հավանականությամբ կիրառվելու է նաեւ Վրաստանում: Այդ մասին հայտարարել է երկրի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին:**

**Վրացական լրատվամիջոցները տեղեկացնում են, որ վերջերս Ֆրանսիա կատարած այցելության ժամանակ Սաակաշվիլին հաստատել է, որ մտադիր է իշխանության ղեկին մնալ նաեւ իր նախագահական ժամկետի լրանալուց՝ 2013-ից հետո: Եվ դա «ապահովվում է» նաեւ այն հանգամանքով, որ, ըստ պաշտոնական տվյալների, մայիսի 30-ին Վրաստանում տեղի ունեցած տեղական ընտրություններում «աներկբա հաղթանակ» տարած Սաակաշվիլու կուսակցության ներկայացուցիչներն ու թիմակիցներն են բոլոր հնարավոր ու կշիռ ունեցող պաշտոններում:**

**Եվս մեկ հանգամանք վրացական տարբեր ուժեր մեկնաբանում են որպես Սաակաշվիլու՝ իշխանության ղեկին մնալու ցանկության ու արդեն գործնական քայլերի դրսեւորում: Խոսքը սահմանադրության նոր նախագծի առնչությամբ հետաքրքրական պատմությունն է, որ օրերս դարձել է վրաց հասարակության քննարկման հիմնական թեման:**

**Հարցն այն է, որ պետական սահմանադրական հանձնաժողովի՝ երկար ժամանակ մշակած նոր նախագիծը, պարզվում է, զգալի տարբերություններ ունի փաստաթղթի անգլերեն եւ վրացերեն տարբերակների համադրության դեպքում: Ավելին, անգլերեն օրինակում որոշ տեղերում գլուխը բաղկացած է երկու մասից, երբ վրացերեն տարբերակում միայն մեկ մաս է նշված: Վենետիկի հանձնաժողովին հունիսի 4-ին ներկայացված անգլերեն տարբերակը շատ տեղերում չի համընկնում վրացերենի հետ: Թեեւ հստակորեն չեն նշվում այդ տարբերությունները, սակայն վրացական ընդդիմությունն ու հասարակական սեկտորը մտավախություն ունեն, որ Սաակաշվիլին նախագահական ժամկետը լրանալուց հետո կդառնա երկրի վարչապետ:**

**Ըստ իրավաբան Թեա Ցուլուկիանիի, նոր սահմանադրությամբ Սաակաշվիլու հետագա գործունեությունը կարող է ընթանալ հետեւյալ սխեմայով. սահմանադրության նոր նախագիծը նախատեսում է, որ խորհրդարանում մեծամասնություն ունեցող կուսակցությունն է նախագահի հաստատմանն առաջարկում վարչապետի թեկնածությունը: Սահմանադրագետ Վախթանգ Խմալաձեն եւս մտահոգություն է հայտնել, որ սահմանադրության նոր նախագծով Միխեիլ Սաակաշվիլին փաստացի հիմք է ապահովում իր վարչապետության համար:**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Թուրքիայի կրթության նախարարը մասնակից՝ Պոլսո հայկական վարժարանների ավարտական հանդեսին

**Թուրքիայի կրթության նախարար տկն Նիմեթ Չուբուքչուն մասնակցել է Պոլսո հայկական վարժարանների ավարտական հանդեսին: Սա աննախադեպ երեւույթ է Թուրքիայի Հանրապետության պատմության մեջ: CNN-Turk-ի վկայությամբ, հանդեսը կազմակերպվել է Կ. Պոլսո հայոց պատրիարքարանի Սուրբ Մարիամ Աստվածածին մայր եկեղեցու «Գազազ Ամիրա» դահլիճում, որտեղ շրջանավարտներին ավարտական վկայականները անձամբ հանձնել է նախարարը:**

**Նիմեթ Չուբուքչուն ընդգծել է, որ փոքրամասնությունների ազգային վարժարանների գոյությունը երաշխավորված է Լոզանի պայմանագրով, Թուրքիայում գոյություն ունեն 22 հայկական վարժարաններ, որոնցից 1-ը՝ նախակրթական, 16-ը՝ տարրական, իսկ 5-ը՝ միջնակարգ դպրոցներ են, եւ այս վարժարաններում սովորում է 2 հազար 600 հայ աշակերտ:**

**«Ազգային կրթության նախարարությունը», ասել է նախարարը, «թուրքերեն լեզվի եւ թուրքական մշակույթի դասագրքերն անվճար տրամադրել է հայկական վարժարանների բոլոր աշակերտներին»: Այնուհետեւ նա խոստացել է, որ անվճար կտրամադրվեն նաեւ հայոց լեզվի դասագրքերը, որոնք արդեն պատրաստվում են:**

**Նախարար Նիմեթ Չուբուքչուն անդրադարձել է նաեւ հայկական վարժարանների առջեւ ծառացած խնդիրներին, որոնցից առանձնացրել է հայոց լեզվի ուսուցիչների պակասը, ավելացնելով. «Այս խնդրի լուծման համար բարձրագույն կրթություն ունեցող Թուրքիայի հայ քաղաքացիներին պատրաստ ենք որպես ուսուցիչ աշխատելու հայկական դպրոցներում»: Ի դեպ, Թուրքիայում ուսուցիչ աշխատելու համար պարտադիր է մանկավարժական կրթությունը, սույն բարձրագույնը դրա իրավունքը չի տալիս:**

**Հ. Գ.**

# Իսրայելը Թուրքիային պատասխանում է նաեւ «հայկական մեջբերումներով»

**Չնայած մինչեւ «Ազատության նավատորմի» վրա իսրայելական հարձակումն էլ թուրք-իսրայելական հարաբերությունները փայլուն չէին, սակայն Գազայի շուրջը եղած իրադարձություններից հետո դրանք էլ ավելի փչացան: Իսրայելը սկսեց մեղադրանքներ տեղալ Անկարայի հասցեին, որ իրականում նավերը հումանիտար օգնություն չէին բերում, այլ ահաբեկչական էին: Սրան զուգահեռ՝ Թել Ավիվը, մասնավորապես հրեական լոբբին, հանկարծ հիշեց հայերի մասին: «Ազգը» նախավերջին համարում գրել էր, որ իսրայելցի ուսանողները, պատասխանելով Էրդողանի մեղադրանքներին, պատրաստվում են մարդասիրական օգնություն ուղարկել Թուրքիա՝ տեղի հայերին ու քրդերին, բացի այդ, հրեական ազդեցիկ լոբբիստական կազմակերպությունները հայտարարել են, որ չեն պատրաստվում այլեւս «օգնել Թուրքիային՝ ընդդեմ Հայոց ցեղասպանության ճանաչման», այս մասին գրում է հայտնի Washington Post-ը: Թերթը հիշեցրել է, որ հենց հրեական լոբբիստական կազմակերպությունների միջամտությամբ ԱՄՆ նախկին նախագահ Բիլ Քլինթոնը նամակ գրեց Ներկայացուցիչների պալատի խոսնակին, եւ հայկական բանաձեւը դուրս եկավ օրակարգից: «Այդ օրերին մեր կազմակերպության հեռախոսը ոչ մի րոպե չէր լռում, մեզ զանգահարում էին տարբեր թուրքական կազմակերպություններից, եւ մեզ հաջողվեց վերջին պահին նամակ ուղարկել Բիլ Քլինթոնին եւ կասեցվեց հայկական բանաձեւի ընդունումը», Washington Post-ի էջերում անկեղծացել է ամերիկաիսրայելական հանձնախմբի ներկայացուցիչ Քեյդ Վիսմանին: Այս տարի՝ մարտի 4-ին նույն Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը ընդունեց հայկական բանաձեւը, այժմ այն պետք է անցնի պալատի լիագումար նիստի օրակարգ, իսկ Ներկայացուցիչների պալատի խոսնակ Նենսի Փելոսին, հիշեցնենք, ապրիլի 24-ին հայտարարեց, որ ինքն «ամեն կերպ պաշտպանելու է բանաձեւի ընդունումը: Այսօր մենք բոլորս հայ ենք», դիմելով ներկաներին նշել էր Փելոսին: Եթե նաեւ գումարենք, որ հրեական կազմակերպությունները որոշել են հակահայկական քայլեր չձեռնարկել, ապա այս անգամ ԱՄՆ-ի կողմից Ցեղասպանության ճանաչման հույսերն ավելի հիմնավոր են թվում:**

**Հայոց ցեղասպանության մասին օրերս միջազգային հանրությանը հիշեցրել է նաեւ հրեա վերլուծաբան Դով Ֆիշերը՝ FrontPage Magazine կայքում: Ֆիշերը տարակուսանք է հայտնել, թե այդ ինչպե՞ս է, որ Անկարան պահանջում է պատժել Իսրայելին մարդասիրական օգնություն տեղափոխող նավատորմի վրա հարձակման համար, սակայն մինչեւ այսօր չի ճանաչել հայերի ցեղասպանությունը: «Իսրայելը նավատորմի դեպքերի հետ կապված հայտնեց իր ափսոսանքը, սակայն Թուրքիան արդեն մեկ հարյուրամյակ հրաժարվում է ընդունել 1,5 մլն հայերի ցեղասպանության փաստը: Անկարան չի ճանաչել եւ ներողություն չի խնդրել հայերից այդ կապակցությամբ», գրում է հրեա վերլուծաբանը: Փաստորեն ստացվում է, որ թուրք-իսրայելական հարաբերություններում հետաքրքրական ընթացք կարող է ստանալ Հայկական հարցը՝ մասնավորապես Իսրայելի ձեռքերում: Իսկ եթե հաշվի առնենք, որ Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձեւ մտել է իսրայելական Քնեսեթ, բացի այդ, հրեական լոբբին մեծ ազդեցություն ունի ԱՄՆ-ում, ապա կարելի է նկատել, որ Թուրքիա-Իսրայել հակամարտությունում միայն Անկարան չէ, որ կարող է «պատժել Թել Ավիվին:**

**Հ. ԱՓՅԱՆ**


**ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԺԱՌԱՆԳԱՎՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԸ ԵՎ ԸՆԾԱՅԱՐԱՆԸ**
**հայտարարում է 2010-2011 ուս. տարվա**
**Ը Ն Դ Ո Ւ Ն Ե Լ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարան եւ ընծայարան կարող են ընդունվել ՀՀ եւ արտասահմանյան երկրների քաղաքացիներ, ովքեր ունեն միջնակարգ, թերի միջնակարգ (կամ ավելի բարձր) կրթություն եւ զավակն են Հայաստանյայց Առաքելական Սբ. Եկեղեցու: Դիմորդները պետք է հանձնեն ընդունելության քննություններ հետեւյալ առարկաներից.

1. Հայոց լեզու (գրավոր, հարցարանով)
2. Հայ գրականություն (բանավոր)
3. Հայոց պատմություն (բանավոր)
4. Երաժշտություն (ձայնային տվյալների ստուգում)

Դիմումները տրվում են Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանի եւ ընծայարանի տեսուչի անունով՝ ներկայացնելով ներքոհիշյալ փաստաթղթերը.

1. Դիմում
2. Միջնակարգ, թերի միջնակարգ (կամ ավելի բարձր) կրթության վկայական
3. Բնութագիր (դպրոցի տնօրենից)
4. Զինվորական դրության մասին փաստաթուղթ (բնօրինակը)
5. Ծնողների համաձայնագիրը
6. 2 լուսանկար (3X4)
7. Անձնագրի պատճեն
8. Ինքնակենսագրություն
9. Երաշխավորագիր թեմի առաջնորդից կամ շրջանի հոգեւոր հովվից
10. Տեղեկանք բնակավայրից
11. Մկրտության վկայական

Փաստաթղթերը ներկայացնել անձամբ Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանի քարտուղարություն:

Դիմումներն ընդունվում են ամեն օր, բացի կիրակի օրերից, մինչեւ հուլիսի 30-ը, ժամը 10:00-16:00-ն (շաբաթ օրը մինչեւ ժամը 13:00):

Հասցե՝ Մայր աթոռ Սուրբ Էջմիածին, Գեւորգյան Հոգեւոր Ճեմարան:
Հեռախոս **(010) 517-185, (010) 517-180:**

*Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանի*
*եւ ընծայարանի Տեսչություն*


ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 10.06.2010, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: